

[Կ-795-04.12.2020-ՊԻ-011/1](#)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ**

**ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հակակոռուպցիոն կոմիտեի լիազորությունները, համակարգը և կառուցվածքը, կազմավորման, գործունեության, ծառայության անցնելու և պաշտոն զբաղեցնելու կարգը և պայմանները, պաշտոնների ու դասային աստիճանների դասակարգումը, ծառայողների իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, իրավական ու սոցիալական երաշխիքները և պաշտոնավարման հետ կապված մյուս հարաբերությունները:

Հոդված 2. Հակակոռուպցիոն կոմիտեի մասին օրենսդրությունը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերաբերելի նորմերով, այլ իրավական ակտերով:

Հոդված 3. Սույն օրենքի հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայություն` պետական ծառայության տեսակ, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով.

2) Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայող` Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք, օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման աշխատողներ.

3) Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը, նրա տեղակալները, հակակոռուպցիոն կոմիտեի վարչությունների պետերը, նրանց տեղակալները, բացառությամբ՝ Հակակոռուպցիոն կոմիտեի՝ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող վարչության ղեկավարի (հետաքննության մարմնի պետի) և նրա տեղակալի, Հակակոռուպցիոն կոմիտեի բաժինների պետերը, նրանց տեղակալները, բացառությամբ՝ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող բաժինների ղեկավարների և նրանց տեղակալների, Հակակոռուպցիոն կոմիտեի հատկապես կարևոր գործերով ավագ քննիչները, հատկապես կարևոր գործերով քննիչները, ավագ քննիչները, քննիչները.

4) Հակակոռուպցիոն կոմիտեում քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձ՝ Հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղարը, նրա տեղակալը և Հակակոռուպցիոն կոմիտեի հիմնական գործառույթների իրականացմանը աջակցող ստորաբաժանումների ծառայողները.

5) կոռուպցիոն հանցագործություններ՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների ցանկի մեջ մտնող հանցագործություններ.

6) Հակակոռուպցիոն կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանում՝ կոմիտեի կազմում գործող վարչություն կամ բաժին:

ԳԼՈՒԽ 2

ՀԱԿԱԿՈՐՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հոդված 4. Հակակոռուպցիոն կոմիտեի կարգավիճակը և լիազորությունները

1. Հակակոռուպցիոն կոմիտեն քննչական մարմին է, որը կազմակերպում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով իր ենթակայությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթը:

2. Հակակոռուպցիոն կոմիտեն իր լիազորությունների շրջանակներում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով իրականացնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն:

3. Հակակոռուպցիոն կոմիտեն իրականացնում է նաև սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 5. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության սկզբունքները

1. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությունը հիմնվում է անկախության, հրապարակայնության, ֆինանսական ինքնուրույնության և քաղաքական չեզոքության սկզբունքների վրա:

2. Հակակոռուպցիոն կոմիտեն օպերատիվ-հետախուզական գործունեությունն իրականացնում է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված օպերատիվ-հետախուզական գործունեության սկզբունքների պահպանմամբ:

Հոդված 6. Հակակոռուպցիոն կոմիտեի անկախությունը

1. Հակակոռուպցիոն կոմիտեն իր լիազորություններն իրականացնելիս, ինչպես նաև իր կառուցվածքին, աշխատանքների կազմակերպման կարգին վերաբերող որոշումներն ընդունելիս անկախ է և ենթարկվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին:

Հոդված 7. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության հրապարակայնությունը և հաշվետվողականությունը

1. Հակակոռուպցիոն կոմիտեն հանրությանը տեղեկացնում է իր գործունեության մասին՝ ապահովելով նախաքննության գաղտնիությունը, ինչպես նաև պետական և օրենքով պահպանվող այլ գաղտնիքների պաշտպանությունը:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը յուրաքանչյուր տարի՝ մինչև հունվարի 31-ը, Կառավարություն և Ազգային ժողով է ներկայացնում նախորդ տարվա գործունեության մասին գրավոր հաղորդում:

3. Հակակոռուպցիոն կոմիտեն յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո՝ մեկամսյա ժամկետում, իր պաշտոնական կայքէջում հրապարակում է գործունեության մասին ամփոփ տեղեկատվություն: Տեղեկատվության կառուցվածքը, դրանում ներառվող հարցերի շրջանակը սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը: Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվությունը պաշտոնական կայքէջում հրապարակվում է յուրաքանչյուր տարի՝ մինչև հունվարի 31-ը:

Հոդված 8. Ֆինանսական ինքնուրույնությունը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին:

2. Հակակոռուպցիոն կոմիտեն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին Վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում յուրաքանչյուր տարի կազմում և Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում Հակակոռուպցիոն կոմիտեի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը (պետական բյուջեով Հակակոռուպցիոն կոմիտեի գծով նախատեսվելիք ծախսերի նախահաշվի նախագիծը)՝ առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում ներառելու համար:

3. Հակակոռուպցիոն կոմիտեի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը Կառավարության կողմից ընդունվելու դեպքում ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում, իսկ առարկության դեպքում պետական բյուջեի նախագծի հետ միասին ներկայացվում է Ազգային ժողով: Կառավարությունն Ազգային ժողով և Հակակոռուպցիոն կոմիտե է ներկայացնում բյուջետային ֆինանսավորման հայտի վերաբերյալ առարկության հիմնավորումը:

4. Հակակոռուպցիոն կոմիտեի բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է Հակակոռուպցիոն կոմիտեի պահուստային ֆոնդ, որը ներկայացվում է բյուջեի առանձին տողով: Պահուստային ֆոնդի մեծությունը հավասար է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով Հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձի ֆոնդի երկու տոկոսին:

5. Պահուստային ֆոնդից հատկացումները կատարվում են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի որոշմամբ:

Հոդված 9. Քաղաքական չեզոքությունը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը ցանկացած հանգամանքներում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն:

2. Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, հանրաքվեներին Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը կարող է մասնակցել միայն որպես ընտրող (քվեարկող):

ԳԼՈՒԽ 3

ՀԱԿԱԿՈՐՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հոդված 10. Հակակոռուպցիոն կոմիտեի համակարգը

1 . Հակակոռուպցիոն կոմիտեի համակարգը ներառում է հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները (այդ թվում՝ տարածքային ստորաբաժանումներ և ներքին անվտանգության հարցերով ստորաբաժանում) և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները:

2 . Հակակոռուպցիոն կոմիտեի ստորաբաժանումներն են վարչությունները և բաժինները: Հակակոռուպցիոն կոմիտեի վարչությունը կարող է ունենալ նաև բաժիններ:

3 . Հակակոռուպցիոն կոմիտեի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը և քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունը ապահովում է Հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղարը:

4 . Հակակոռուպցիոն կոմիտեի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում աշխատողները քաղաքացիական ծառայողներ են, որոնց վրա տարածվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքը:

5 . Հակակոռուպցիոն կոմիտեում պայմանագրային կարգով սպասարկման աշխատանքներ իրականացնող անձինք ծառայողներ չեն և աշխատանքի են ընդունվում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

6 . Հակակոռուպցիոն կոմիտեի կառուցվածքը, պաշտոնների, այդ թվում՝ հայեցողական պաշտոնների, տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց, անվանացանկը և հաստիքացուցակը հաստատում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:

Հոդված 11. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը ղեկավարում և վերահսկում է Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությունը և պատասխանատու է Հակակոռուպցիոն կոմիտեի բնականոն գործունեության ապահովման համար:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը՝

1) սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կողմից կոռուպցիոն գործերի բացահայտման և քննության պատշաճ կազմակերպման ուղեցույցները և ապահովում դրանց իրականացման նկատմամբ վերահսկողությունը.

2) կատարում է աշխատանքի բաժանում իր տեղակալների միջև.

3) իր իրավասության սահմաններում ընդունում է ենթաօրենսդրական, ներքին և անհատական իրավական ակտեր, տալիս է հանձնարարականներ.

4) ներկայացնում է Հակակոռուպցիոն կոմիտեն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների (այդ թվում՝ միջազգային) հետ հարաբերություններում.

5) հաստատում է Հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությունը, կառուցվածքը, պաշտոնների անվանացանկը և հաստիքացուցակը.

6) նշանակում է ծառայողական քննություններ կամ դադարեցնում դրանք, նշանակում և փոփոխում է ծառայողական քննություն կատարողին.

7) խրախուսում և կարգապահական պատասխանատվության է ենթարկում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներին, պարզևատրում է Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությանն օժանդակող անձանց.

8) Հակակոռուպցիոն կոմիտեի խնդիրների իրականացման, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով ստեղծում է խորհրդակցական մարմիններ՝ սահմանելով դրանց գործունեության կարգը.

9) քայլեր է ձեռնարկում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի և նրա ընտանիքի անդամների անվտանգության ապահովման ուղղությամբ՝ այդ թվում՝ «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.

10) սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաքինության ստուգման կարգը և պայմանները.

11) իրավասու է ներքին անվտանգության ստորաբաժանման միջոցով իրականացնել Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաքինության ստուգում, այդ թվում՝ պրովոկացիոն եղանակներով: Առաքինության ստուգման գործընթացը չպետք է խոչընդոտի Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների բնականոն գործունեությունը.

12) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

3. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում՝ նրա հանձնարարությամբ նրան փոխարինում է Հակակոռուպցիոն կոմիտեի

նախագահի տեղակալներից մեկը, իսկ հանձնարարության բացակայության դեպքում՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ առավել երկար մասնագիտական ստաժ ունեցող տեղակալը:

4. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին սույն օրենքով սահմանված կարգով նշանակում է Կառավարությունը՝ վեց տարի ժամկետով:

5. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնում:

6. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնավարման ժամկետը չի կարող գերազանցել սույն օրենքով սահմանված պաշտոնավարման սահմանային տարիքը՝ անկախ վերանշանակման հանգամանքից:

Հոդված 12. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին ունի երեք տեղակալ:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալը՝

1) համակարգում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից իրեն հանձնարարված ոլորտի աշխատանքները.

2) իր իրավասության սահմաններում ընդունում է ներքին և անհատական իրավական ակտեր, տալիս հանձնարարականներ.

3) միջնորդություններ է ներկայացնում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներին խրախուսելու կամ նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.

4) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 13. Ծառայողական և քրեադատավարական վերադասությունը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը վերադաս է Հակակոռուպցիոն կոմիտեի բոլոր ծառայողների համար:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալը վերադաս է Հակակոռուպցիոն կոմիտեի՝ իր համակարգման ներքո գտնվող բոլոր ծառայողների համար:

3. Հակակոռուպցիոն կոմիտեի ստորաբաժանման պետը վերադաս է տվյալ ստորաբաժանման բոլոր ծառայողների համար:

4. Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողական վերադասության մյուս հարաբերությունները կարգավորվում են Հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությամբ:

5. Հակակոռուպցիոն կոմիտեում քրեադատավարական վերադասության հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով:

ԳԼՈՒԽ 4

ՀԱԿԱԿՈՐՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ, ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՈՒ ԱԶԱՏՄԱՆ, ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հոդված 14. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների պաշտոնների համակարգը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.

- 1) բարձրագույն պաշտոններ.
- 2) գլխավոր պաշտոններ.
- 3) առաջատար պաշտոններ.
- 4) կրտսեր պաշտոններ:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների բարձրագույն, գլխավոր և առաջատար պաշտոնների խմբերը դասակարգվում են 1-ին, 2-րդ և 3-րդ ենթախմբերի, իսկ կրտսեր պաշտոնները՝ 1-ին և 2-րդ ենթախմբերի:

3. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների պաշտոնների խմբերում 1-ին ենթախումբը տվյալ խմբի բարձրագույն ենթախումբն է:

4. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների բարձրագույն խմբի պաշտոնները դասակարգվում են հետևյալ ենթախմբերի՝ ընդգրկելով հետևյալ պաշտոնները.

- 1) 1-ին ենթախումբ՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ.
- 2) 2-րդ ենթախումբ՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալ.
- 3) 3-րդ ենթախումբ՝ Հակակոռուպցիոն կոմիտեի վարչության, այդ թվում՝

տարածքային վարչության պետ:

5. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների գլխավոր պաշտոնները դասակարգվում են հետևյալ ենթախմբերի՝ ընդգրկելով հետևյալ պաշտոնները.

1) 1-ին ենթախումբ՝ Հակակոռուպցիոն կոմիտեի վարչության պետի, այդ թվում՝ տարածքային վարչության պետի տեղակալ.

2) 2-րդ ենթախումբ՝ Հակակոռուպցիոն կոմիտեի հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ.

3) 3-րդ ենթախումբ՝ Հակակոռուպցիոն կոմիտեի հատկապես կարևոր գործերով քննիչ, Հակակոռուպցիոն կոմիտեի բաժնի պետ:

6. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաջատար պաշտոնները դասակարգվում են հետևյալ ենթախմբերի ընդգրկելով հետևյալ պաշտոնները.

1) 1-ին ենթախումբ՝ Հակակոռուպցիոն կոմիտեի բաժնի պետի տեղակալ.

2) 2-րդ ենթախումբ՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ավագ քննիչ.

3) 3-րդ ենթախումբ՝ Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչ:

7. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կրտսեր պաշտոնները դասակարգվում են հետևյալ ենթախմբերի ընդգրկելով հետևյալ պաշտոնները.

1) 1-ին ենթախումբ՝ հակակոռուպցիոն կոմիտեի ավագ օպերիվագոր.

2) 2-րդ ենթախումբ՝ հակակոռուպցիոն կոմիտեի օպերիվագոր:

Հոդված 15. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներին ներկայացվող հիմնական պահանջները

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի պաշտոն կարող է զբաղեցնել Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով՝

1) ունի Հայաստանի Հանրապետությունում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն կրթության որակավորման աստիճան կամ օտարերկրյա պետությունում ձեռք բերած համապատասխան որակավորման աստիճան, որի ձանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է օրենքով սահմանված կարգով.

2) անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի անձանց) կամ ազատված է նման ծառայությունից օրենքով սահմանված կարգով ու հիմքով.

3) տիրապետում է հայերենին.

4) ունի ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներից առնվազն մեկ՝ ստանդարտացված թեստային համակարգերով կամ Կառավարության կողմից սահմանված այլ կարգով ստուգվող լեզվական գիտելիքների համապատասխան մակարդակի իմացություն: Սույն կետի պահանջը չի տարածվում կրտսեր պաշտոններ զբաղեցնող անձանց նկատմամբ.

5) բավարարում է պաշտոնին ներկայացվող սույն օրենքով նախատեսված պահանջները, և առկա չեն պաշտոնի նշանակման համար սույն օրենքով սահմանված սահմանափակումները:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի պաշտոնում չի կարող նշանակվել այն անձը՝

1) ով դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) ով օրինական ուժի մեջ մտած դատական ակտով զրկվել է հանրային ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) ով դատապարտվել է հանցագործության համար՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից.

4) ում նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում.

5) ում նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է, կամ քրեական հետապնդում չի իրականացվել ոչ արդարացնող հիմքով.

6) ով ունի Կառավարության հաստատած ցանկով նախատեսված՝ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու դեպքում լիազորությունների իրականացմանը խոչընդոտող հիվանդություն կամ ֆիզիկական արատ.

7) ով, լինելով դատավոր կամ նախկին դատավոր, վերջին երեք տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ՝ անկախ կարգապահական տույժի սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից.

8) ով, լինելով դատախազ, քննիչ, նախկին դատախազ կամ նախկին քննիչ, վերջին երեք տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ՝ անկախ կարգապահական տույժի սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից.

9) ով, լինելով հետաքննիչ, օպերլիազոր, նախկին հետաքննիչ կամ նախկին օպերլիազոր, վերջին երեք տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ՝ անկախ կարգապահական տույժի սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից.

10) ով, լինելով փաստաբան կամ նախկին փաստաբան, վերջին երեք տարվա ընթացքում ստացել է խիստ նկատողություն կամ օրենքով սահմանված ավելի ծանր կարգապահական տույժ՝ անկախ կարգապահական տույժի սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից:

3. Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող պաշտոններ զբաղեցնող անձանց ֆիզիկական պատրաստականության, առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանում է Կառավարությունը:

4. Հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիքը 60 տարեկանն է: Սահմանային տարիքը լրանալուց հետո Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը կարող է մինչև 5 տարի ժամկետով երկարաձգել պաշտոնավարման ժամկետը: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի պաշտոնների սահմանային տարիքը 65 տարեկանն է:

Հոդված 16. Հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոնի նշանակելու պայմանները

1. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ կարող է նշանակվել սույն օրենքի 15-րդ հոդվածի պահանջներին բավարարող անձը, ով մինչև նշանակումը զբաղեցրել է քննչական մարմնի բարձրագույն կամ գլխավոր խմբերի պաշտոն կամ ունի դատավորի, դատախազի, քննիչի կամ փաստաբանի կամ հակակոռուպցիոն ոլորտում քաղաքականության մշակման կամ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կամ օպերատիվ-հետախուզական գործունեության ոլորտներում գործունեության առնվազն 5 տարվա ստաժ կամ տվյալ պաշտոններում առնվազն 5 տարվա ընդհանուր՝ իրար փոխլրացնող, ստաժ:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալ կարող է նշանակվել սույն օրենքի 15-րդ հոդվածի պահանջներին բավարարող անձը, ով մինչև նշանակումը զբաղեցրել է քննչական մարմնի բարձրագույն կամ գլխավոր խմբերի պաշտոն կամ ունի դատավորի, դատախազի, քննիչի կամ փաստաբանի կամ հակակոռուպցիոն ոլորտում քաղաքականության մշակման կամ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կամ օպերատիվ-հետախուզական գործունեության ոլորտներում գործունեության առնվազն 4 տարվա ստաժ կամ տվյալ պաշտոններում առնվազն 4 տարվա ընդհանուր՝ իրար փոխլրացնող ստաժ:

3. Հակակոռուպցիոն կոմիտեի վարչության պետ և նրա տեղակալ, այդ թվում՝ տարածքային վարչության պետ, վարչության պետի տեղակալ կարող է նշանակվել սույն օրենքի 15-րդ հոդվածի պահանջներին բավարարող այն անձը, ով ունի իրավագիտության բակալավրի որակավորման աստիճան կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ օտարերկրյա պետությունում ձեռք է բերել դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ համապատասխան աստիճան, որի ձանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է օրենքով սահմանված կարգով, և ով մինչև նշանակումը զբաղեցրել է քննչական մարմնի գլխավոր կամ առաջատար խմբի պաշտոն կամ ունի դատախազի, քննիչի կամ փաստաբանի առնվազն 4

տարվա ստաժ: Օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող վարչության ղեկավար կամ նրա տեղակալ կարող է նշանակվել նաև իրավաբանական կրթություն չունեցող, օպերատիվ-հետախուզական գործունեության առնվազն 5 տարվա ստաժ ունեցող անձը:

4. Հակակոռուպցիոն կոմիտեի հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ կարող է նշանակվել սույն օրենքի 15-րդ հոդվածի պահանջներին բավարարող այն անձը, ով ունի իրավագիտության բակալավրի որակավորման աստիճան կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ օտարերկրյա պետությունում ձեռք է բերել դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ համապատասխան աստիճան, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է օրենքով սահմանված կարգով, և ով մինչև նշանակումը զբաղեցրել է քննչական մարմնի գլխավոր կամ առաջատար խմբի պաշտոն կամ ունի դատախազի, քննիչի կամ փաստաբանի առնվազն 3 տարվա ստաժ:

5. Հակակոռուպցիոն կոմիտեի բաժնի պետ, հակակոռուպցիոն կոմիտեի հատկապես կարևոր գործերով քննիչ կարող է նշանակվել սույն օրենքի 15-րդ հոդվածի պահանջներին բավարարող այն անձը, ով ունի իրավագիտության բակալավրի որակավորման աստիճան կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ օտարերկրյա պետությունում ձեռք է բերել դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ համապատասխան աստիճան, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է օրենքով սահմանված կարգով, և ով մինչև նշանակումը զբաղեցրել է քննչական մարմնի գլխավոր խմբի կամ վերջին երկու տարին առաջատար խմբի պաշտոն կամ ունի դատախազի, քննիչի կամ փաստաբանի առնվազն 2 տարվա ստաժ: Օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող բաժնի ղեկավար կարող է նշանակվել նաև իրավաբանական կրթություն չունեցող, օպերատիվ-հետախուզական գործունեության առնվազն 4 տարվա ստաժ ունեցող անձը:

6. Հակակոռուպցիոն կոմիտեի բաժնի պետի տեղակալ, հակակոռուպցիոն կոմիտեի ավագ քննիչ կարող է նշանակվել սույն օրենքի 15-րդ հոդվածի պահանջներին բավարարող այն անձը, ով ունի իրավագիտության բակալավրի որակավորման աստիճան կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ օտարերկրյա

պետությունում ձեռք է բերել դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ համապատասխան աստիճան, որի ձանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է օրենքով սահմանված կարգով, և ով մինչև նշանակումը զբաղեցրել է քննչական մարմնի առաջատար խմբի պաշտոն կամ ունի դատախազի, քննիչի կամ փաստաբանի առնվազն 1.5 տարվա ստաժ: Օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող բաժնի ղեկավարի տեղակալ կարող է նշանակվել նաև իրավաբանական կրթություն չունեցող, հետաքննիչի կամ օպերատիվ-հետախուզական գործունեության առնվազն 3 տարվա ստաժ ունեցող անձը:

7. Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչ կարող է նշանակվել սույն օրենքի 15-րդ հոդվածի պահանջներին բավարարող այն անձը, ով ունի իրավագիտության բակալավրի որակավորման աստիճան կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ օտարերկրյա պետությունում ձեռք է բերել դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ համապատասխան աստիճան, որի ձանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է օրենքով սահմանված կարգով, և ունի առնվազն 1 տարվա իրավաբանի մասնագիտական աշխատանքային ստաժ:

8. Հակակոռուպցիոն կոմիտեի ավագ օպերիվագոր կարող է նշանակվել սույն օրենքի 15-րդ հոդվածի պահանջներին բավարարող այն անձը, ով ունի առնվազն 1 տարվա օպերատիվ-հետախուզական գործունեության կամ առնվազն 2 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

9. Հակակոռուպցիոն կոմիտեի օպերիվագոր կարող է նշանակվել սույն օրենքի 15-րդ հոդվածի պահանջներին բավարարող այն անձը, ով ունի 1 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

10. Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնները համալրվում են սույն օրենքով սահմանված կարգով անցկացվող մրցույթի արդյունքների հիման վրա:

11. Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրվում են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի սահմանած կարգով և պայմաններով անցկացվող մրցույթի արդյունքների հիման վրա: Բացառությամբ սույն հոդվածի 12-րդ մասով նախատեսված դեպքերի՝ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթը պարտադիր պետք է ներառի բարեվարքության

ուսումնասիրության փուլը, որն անցկացվում է սույն օրենքի 17-րդ հոդվածի 10-րդ մասի 3-րդ կետով սահմանված կարգով: Օպերատիվ-հետախուզական գործառնություններ իրականացնող պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք ցուցակում ընդգրկվելուց հետո անցնում են վերապատրաստման դասընթաց: Վերապատրաստման դասընթացի անցկացման կարգը հաստատվում է ենթաօրենսդրական ակտով:

12. Հակակոռուպցիոն կոմիտեի այն պաշտոններում, որոնցում ծառայողների անձը ծածկագրված է, և նրանք իրենց լիազորություններն իրականացնում են գաղտնագործունեության լիակատար պահպանմամբ, պաշտոնի նշանակելու (ատեստավորման, վերապատրաստման, այլ պաշտոնի փոխադրելու) կարգը և պայմանները սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:

13. Սույն հոդվածի 12-րդ մասով նախատեսված դեպքերում տվյալ պաշտոնում նշանակումը կատարում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը՝ պաշտոնը թափուր մնալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

14. Հակակոռուպցիոն կոմիտեում թափուր պաշտոնի կարող է նշանակվել պաշտոնակատար, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով:

Հոդված 17. Հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը և պաշտոնում նշանակումը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թեկնածուների (բացառությամբ՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների) ցուցակը համալրում է մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

2. Հանձնաժողովը կազմավորում և դրա գործունեության կարգը հաստատում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը: Հանձնաժողովի կազմի մեջ մտնում են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից նշանակված Հակակոռուպցիոն կոմիտեի 3 ծառայող, Կառավարության կողմից առաջադրած 1 անձ, քաղաքացիական հասարակության 1 ներկայացուցիչ: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայող չհանդիսացող անձինք Հանձնաժողովում կարող են ընդգրկվել, եթե ունեն առնվազն 5 տարվա իրավաբանի մասնագիտական աշխատանքային ստաժ:

3. Քաղաքացիական հասարակության ներկայացուցչի ներգրավման կարգը հաստատում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:

4. Հանձնաժողովը ղեկավարում է Հանձնաժողովի նախագահը, որին Հանձնաժողովի անդամներից նշանակում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:

5. Հակակոռուպցիոն կոմիտեում թափուր պաշտոն առաջանալու դեպքում Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը նշանակում է մրցույթ (բացառությամբ՝ սույն օրենքի 16-րդ հոդվածի 12-րդ մասի) պաշտոնը թափուր մնալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

6. Թափուր պաշտոնի մրցույթ անցկացնելու վերաբերյալ հրապարակվում է հայտարարություն մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքէջում (www.azdarar.am) և Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

7. Հանձնաժողովը կազմում և Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի հաստատմանն է ներկայացնում Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթի հայտարարության ձևը, ինչպես նաև մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը, այդ թվում՝ թեկնածուի մասնագիտական գիտելիքների ստուգման նպատակով անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, թեկնածուի մասնագիտական գիտելիքների ստուգման նպատակով կազմված հարցերից բաղկացած թեստավորման հարցարանի (այսուհետ՝ Հարցարանը) 3 տարբերակները, թեստավորման անցկացման պայմանները և անցողիկ միավորը, թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը, առավելագույն միավորի բաշխումը՝ ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների, գնահատման ենթակա պահանջների բովանդակությունը բացահայտող չափանիշները, չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը՝ համապատասխան պահանջի համար նախատեսված առավելագույն միավորի շրջանակներում, գնահատման և միավորների հաշվարկման կարգը:

8. Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների թեստավորման հարցարանի հարցերի 20%-ը պետք է ներառի Հայաստանի Հանրապետության սահմանադրության, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտերի, վերաբերելի նախադեպային որոշումների, 20%-ը՝ քրեական օրենսդրության, 20%-ը՝ քրեական դատավարության օրենսդրության, 20%-ը՝ գույքի բռնագանձման, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ոլորտների օրենսդրության, 20%-ը՝ հաշվապահական հաշվառման կամ իրավաբանական անձի կարգավիճակը և գործունեությունը կարգավորող ոլորտների իմացության ստուգմանն ուղղված հարցեր:

9. Հայտարարությունը պետք է պարունակի առնվազն հետևյալ տվյալները.

1) թեկնածուին ներկայացվող պահանջները.

2) մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ դիմումին կից փաստաթղթերի ցանկը, այդ թվում՝ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի ձևանմուշը.

3) մրցույթի անցկացման պայմանները, թեստային առաջադրանքների առնվազն մեկ նմուշօրինակ, թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը, առավելագույն միավորի բաշխումը՝ ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների, գնահատման ենթակա պահանջների բովանդակությունը բացահայտող չափանիշները, չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը՝ համապատասխան պահանջի համար նախատեսված առավելագույն միավորի շրջանակներում, գնահատման և միավորների հաշվարկման կարգը.

4) փաստաթղթերը ներկայացնելու ժամկետը և վայրը:

10. Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների մրցույթն անցկացվում է հետևյալ փուլերով՝

1) փաստաթղթերի ուսումնասիրության փուլ՝ դիմումը և կից փաստաթղթերը (այսուհետ նաև՝ հայտ) ստանալուց հետո՝ երեք օրվա ընթացքում, Հանձնաժողովը համադրում է մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերի, բացառությամբ բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկի, համապատասխանությունը սույն օրենքով նախատեսված պահանջներին: Թեկնածուն իրավունք ունի պարզաբանումներ տալու իր փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների վերաբերյալ: Սահմանված փաստաթղթերը թերի լինելու դեպքում այդ մասին հայտատուին տեղեկացվում է նույն պահին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մեկօրյա ժամկետում: Թերությունները կարող են վերացվել հայտերի ընդունման համար սահմանված ժամկետի ընթացքում: Փաստաթղթերը ներկայացնելու համար սահմանված ժամկետի խախտմամբ կամ օրենքով նախատեսված պահանջները չբավարարող հայտերի ընդունումը մերժվում է, և դրանք Հանձնաժողովի կողմից ենթակա են վերադարձման երեք աշխատանքային օրվա ընթացքում: Մրցույթն անցկացվում է նաև այն դեպքերում, երբ մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ մասնակից.

2) թեստավորման փուլ՝ փաստաթղթերի ուսումնասիրության փուլի ավարտից հետո տասնօրյա ժամկետում Հանձնաժողովը փաստաթղթերի ուսումնասիրության փուլը հաղթահարած մասնակիցների համար կազմակերպում է թեստավորման փուլը, որի ընթացքում ստուգվում են մասնակիցների մասնագիտական գիտելիքները: Թեստավորման անցկացման նույն օրը կազմվում և Հակակոռուպցիոն

կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակվում է թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցների ցուցակը, ինչպես նաև հարցազրույցի օրը և վայրը.

3 քարտեզագրության ուսումնասիրության փուլ՝ Հանձնաժողովը թեստավորման փուլի ավարտից հետո՝ մեկօրյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցների քարտեզագրության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը՝ մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով.

4 իարցազրույցի փուլ՝ Հանձնաժողովը քարտեզագրության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում անցկացնում է հարցազրույց՝ հարցազրույցի անցկացման օրվա և վայրի մասին տեղեկատվությունը հարցազրույցն անցկացնելուց առնվազն երեք օր առաջ հրապարակելով իր պաշտոնական կայքէջում: Հարցազրույցի փուլին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել նաև հոգեբան, որին ներգրավում է Հանձնաժողովը: Հարցազրույցի փուլում Հանձնաժողովի անդամները գնահատում են մասնակցի աշխատանքային ձեռքբերումները, վերլուծական կարողությունները, տարբեր իրավիճակներում վարվեցողությունը, պատասխանատվության զգացումը, հաղորդակցման հմտությունները, տվյալ պաշտոնում նշանակվելու նրա շարժառիթը, ակնկալիքները և այդ պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ այլ անձնական որակները և արժանիքները: Հարցազրույցի ընթացքում մասնակցին կարող են նաև հարցադրումներ կատարվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված քարտեզագրության վերաբերյալ խորհրդատվական եզրակացության տվյալների վերաբերյալ: Մասնակցին տրվող հարցերը չպետք է ունենան նրա իրավաբանական գիտելիքները ստուգելու նպատակ.

5 խորյունքների ամփոփման փուլ՝ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամին տրամադրվում է հարցաթերթ, որտեղ նշվում են գնահատման ենթակա հատկանիշները: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ գնահատում է յուրաքանչյուր մասնակցին՝ նշելով իր նկատառումները գնահատվող հատկանիշների վերաբերյալ: Հարցազրույցի արդյունքում Հանձնաժողովը կազմում է մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակ, որտեղ ներառվում են միավորների հանրագումարի արդյունքով առավելագույն միավորներ ստացած թեկնածուները: Եթե մասնակիցների միավորների հավասարության պատճառով հնարավոր չէ որոշել հաղթողին, ապա անցկացվում է բաց քվեարկություն, որի ընթացքում Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իր ներքին համոզմամբ քվեարկում է

առավելագույն հավասար ձայներ ստացած այս կամ այն թեկնածուի օգտին: Քվեարկության ժամանակ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի հրավումք: Մրցույթի վերջնական արդյունքները մեկօրյա ժամկետում հրապարակվում են Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

11. Մասնակիցը մրցույթի արդյունքները հրապարակվելուց հետո երկօրյա ժամկետում կարող է դրանք գրավոր բողոքարկել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին: Բողոքարկման վերաբերյալ պատասխանը տրվում է մեկ օրվա ընթացքում:

12. Մրցույթի արդյունքների հրապարակումից հետո գրավոր բողոքի բացակայության դեպքում, իսկ բողոքի առկայության դեպքում՝ բողոքարկման վերաբերյալ պատասխան տալուց հետո՝ մեկօրյա ժամկետում, Հանձնաժողովը մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուների ցուցակը ներկայացնում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին: Ցուցակին կցվում են նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված խորհրդատվական եզրակացությունները:

13. Ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով մասնագիտական պատրաստում են անցնում Արդարադատության ակադեմիայում: Անձը հանվում է ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակից, եթե Արդարադատության ակադեմիայում դասավանդվող առարկայական կուրսի արդյունքում ստացած քննական միավորը պակաս է կուրսը հանձնված համարելու համար Արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի սահմանած նվազագույն միավորից, կամ նա չի անցել «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված փորձաշրջանը կամ Արդարադատության ակադեմիայում ուսումնառության ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է նախատեսված ուսումնական դասընթացների առնվազն 5 տոկոսից:

14. Անձն ազատվում է սույն օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասով և սույն հոդվածի 13-րդ մասով նախատեսված ուսումնառությունից, եթե ունի դատավորի, դատախազի, քննիչի, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնողի պաշտոնում կամ փաստաբանի 2 տարվա մասնագիտական աշխատանքի ստաժ, եթե այդ պաշտոնը թողնելուց կամ գործունեության դադարեցումից հետո չի անցել 5 տարի:

15. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը համապատասխան ուսումնառությունն ավարտած թեկնածուների կամ սույն հոդվածի 14-րդ մասով սահմանված թեկնածուների ցուցակը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում կատարում է նշանակում համապատասխան պաշտոնում, իսկ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթի դեպքում՝ մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների ցուցակը ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, Վարչապետին է առաջարկում մրցույթում հաղթող ճանաչված Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի թեկնածությունը՝ կցելով թեկնածուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված խորհրդատվական եզրակացությունը:

16. Եթե մասնակիցներից ոչ մեկ չի հավաքել անհրաժեշտ միավորն ու մրցույթում հաղթող չի ճանաչվել, ապա անցկացվում է նոր մրցույթ, որը հայտարարվում և անցկացվում է սույն հոդվածով սահմանված կարգով:

17. Եթե մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ դիմողները չեն բավարարում սույն օրենքով պաշտոնի անցնելու համար ներկայացվող պահանջներին, կամ դիմողներից ոչ մեկը չի ներկայացել մրցույթին, ապա մրցույթը համարվում է չկայացած, և տասնօրյա ժամկետում հայտարարվում է նոր մրցույթ, որն անցկացվում է սույն հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 18. Մրցութային խորհրդի ձևավորումը և գործառույթները

1. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար ձևավորվում է մրցութային խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ):

2. Խորհուրդը ձևավորվում է Կառավարության, Ազգային ժողովի խորհրդի, Բարձրագույն դատական խորհրդի, Գլխավոր դատախազի, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից նշանակված մեկական թեկնածուներից և քաղաքացիական հասարակության երկու ներկայացուցից:

3. Խորհրդի անդամ բացառությամբ քաղաքացիական հասարակության ներկայացուցի, կարող է նշանակվել բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն կրթության որակավորման աստիճան կամ օտարերկրյա պետությունում ձեռք բերած համապատասխան որակավորման աստիճան, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում, բարձր մասնագիտական և բարոյական հատկանիշներ ունեցող, կուսակցական պատկանելիություն չունեցող յուրաքանչյուր ոք, ով ունի քրեական մասնագիտացման դատավորի, դատախազի, քննիչի, հետաքննիչի, օպերլիազորի

կամ փաստաբանի կամ հակակոռուպցիոն ոլորտում քաղաքականության մշակման կամ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում գործունեության առնվազն 5 տարվա ստաժ կամ տվյալ պաշտոններում առնվազն 5 տարվա ընդհանուր՝ իրար փոխլրացնող ստաժ:

4. Խորհրդի կազմում ընդգրկվելու համար Վարչապետի աշխատակազմի ղեկավարը Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնավարման ժամկետի ավարտից 90 օր առաջ կամ թափուր տեղի առաջացման պահից տասնօրյա ժամկետում դիմում է Ազգային ժողովին, Կառավարությանը, Բարձրագույն դատական խորհրդին, Մարդու իրավունքների պաշտպանին, Գլխավոր դատախազությանը՝ տասնօրյա ժամկետում մեկական անդամ նշանակելու համար: Վարչապետի աշխատակազմի ղեկավարը նույն ժամկետում ապահովում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներգրավման վերաբերյալ հայտարարության հրապարակումը:

5. Քաղաքացիական կազմակերպությունների ներգրավման վերաբերյալ հայտարարության հրապարակումից հետո՝ տասնօրյա ժամկետում, հասարակական կազմակերպությունները վարչապետի աշխատակազմ են ներկայացնում Խորհրդում ներգրավվելու վերաբերյալ դիմում՝ դրան կցելով Հակակոռուպցիոն ոլորտի փորձառությունը հավաստող փաստաթղթերը: Երկուսից ավելի Հասարակական կազմակերպության դիմելու դեպքում նախապատվությունը տրվում է Հակակոռուպցիոն ոլորտի առավել երկար փորձառություն ունեցող հասարակական կազմակերպության ներկայացուցչին: Յուրաքանչյուր հասարակական կազմակերպություն մրցութային խորհրդում կարող է ունենալ միայն մեկ ներկայացուցիչ:

6. Խորհուրդը համարվում է ձևավորված դրանում առնվազն չորս անդամի ներգրավումից հետո: Սահմանված ժամկետում առնվազն չորս անդամի չնշանակվելու դեպքում Խորհուրդը համարվում է չձևավորված, և Վարչապետի աշխատակազմի ղեկավարը սույն օրենքով սահմանված կարգով ձևավորում է նոր խորհուրդ:

7. Խորհրդի նիստերը բաց են քաղաքացիական հասարակության, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների համար: Խորհրդի նիստերը տեսաձայնագրվում են:

8. Խորհրդի նիստերի անցկացման վերաբերյալ տեղակատվությունը հրապարակվում է Վարչապետի աշխատակազմի պաշտոնական կայքէջում, ոչ ուշ քան նիստի անցկացումից 48 ժամ առաջ:

9. Խորհրդի աշխատանքները կազմակերպում է Վարչապետի աշխատակազմը:

10. Խորհրդի նիստն իրավագոր է Խորհրդի անդամների առնվազն կեսից ավելիի մասնակցության դեպքում: Խորհրդի առաջին նիստը վարում է Խորհրդի՝ նիստին մասնակցող տարիքով ավագ անդամը:

11. Խորհրդի անդամներն իրենց կազմից ընտրում են նախագահ և քարտուղար:

12. Խորհուրդը՝

1) սահմանում է իր գործունեության աշխատակարգը.

2) ապահովում է մրցույթի անցկացման պայմանների և ժամկետների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը.

3) համադրում է թեկնածուի համապատասխանությունը սույն օրենքով նախատեսված պահանջներին (փաստաթղթերի գնահատման փուլ).

4) հարցազրույցի փուլի անցկացման նպատակով սահմանում է Հարցարանը, թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը, առավելագույն միավորի բաշխումը՝ ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների, գնահատման ենթակա պահանջների բովանդակությունը բացահայտող չափանիշները, չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը՝ համապատասխան պահանջի համար նախատեսված առավելագույն միավորի շրջանակներում, գնահատման և միավորների հաշվարկման կարգը.

5) փաստաթղթերի գնահատման փուլի արդյունքում ընտրում է հարցազրույցի փուլ անցած թեկնածուների.

6) դիմում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ հարցազրույցի փուլ անցած թեկնածուների բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու և խորհրդատվական բնույթի եզրակացություն ներկայացնելու նպատակով:

7) հարցազրույցի փուլի արդյունքում ընտրում է ներկայացվող պահանջներին առավելագույնս համապատասխանող մրցույթում հաղթող ճանաչված առնվազն երկու և առավելագույնը երեք մասնակից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել մեկ թեկնածու.

8) կազմում և Կառավարություն է ներկայացնում մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակը՝ միաժամանակ այն հրապարակելով Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում և Վարչապետի աշխատակազմի պաշտոնական կայքէջում:

Հոդված 19. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար անցկացվող մրցույթը և նշանակումը

1. Խորհուրդը Վարչապետի աշխատակազմի միջոցով (սույն հոդվածում այսուհետ՝ Աշխատակազմ) մրցույթը հայտարարում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան 90, և ոչ ուշ, քան 50 օր առաջ, իսկ նրա պաշտոնը թափուր մնալու դեպքում՝ 40 օրվա ընթացքում:

2. Հայտարարությունը հրապարակվում է հրապարակային ժամուցումների պաշտոնական ինտերնետային կայքէջում (www.azdarar.am), Աշխատակազմի և Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջերում:

3. Հայտարարությունը պետք է պարունակի հետևյալ տվյալները.

1) թեկնածուին ներկայացվող պահանջները.

2) մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, այդ թվում՝ բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկի ձևանմուշը.

3) մրցույթի անցկացման պայմանները, Հարցարանը.

4) փաստաթղթերը ներկայացնելու ժամկետը և վայրը:

4. Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Կառավարությունը:

5. Մրցույթին մասնակցելու հավակնություն ունեցող անձը (այսուհետ՝ հավակնորդ) հայտարարության հրապարակմանը հաջորդող 10 օրվա ընթացքում Աշխատակազմ է ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը:

6. Խորհուրդը մրցույթն անցկացնում է հետևյալ փուլերով՝

1) փաստաթղթերի ուսումնասիրության փուլ՝ դիմումը և կից փաստաթղթերը (այսուհետ նաև՝ հայտ) ստանալուց հետո՝ երեք օրվա ընթացքում, Խորհուրդը համադրում է թեկնածուի կողմից ներկայացված փաստաթղթերի, բացառությամբ բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկի, համապատասխանությունը սույն օրենքով նախատեսված պահանջներին: Թեկնածուն իրավունք ունի պարզաբանումներ տալու իր փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների վերաբերյալ: Սահմանված փաստաթղթերը թերի լինելու դեպքում այդ մասին հայտատուին տեղեկացվում է նույն պահին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մեկօրյա ժամկետում: Թերությունները կարող են վերացվել հայտերի ընդունման համար սահմանված ժամկետի ընթացքում: Փաստաթղթերը ներկայացնելու համար սահմանված ժամկետի խախտմամբ կամ օրենքով նախատեսված պահանջները չբավարարելու դեպքում Խորհուրդը կայացնում է հայտի ընդունումը մերժելու մասին որոշում: Սույն դեպքում թեկնածուի կողմից ներկայացրած փաստաթղթերը Խորհրդի կողմից ենթակա են վերադարձման

երեք աշխատանքային օրվա ընթացքում: Թերությունները կարող են վերացվել հայտերի ընդունման համար սահմանված ժամկետի ընթացքում: Մրցույթն անցկացվում է նաև այն դեպքերում, երբ մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ մասնակից:

2) բարեվարքության ուսումնասիրության փուլ՝ փաստաթղթերի ուսումնասիրության փուլի ավարտից հետո՝ մեկօրյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում փաստաթղթերի ուսումնասիրության փուլը հաղթահարած մասնակիցների բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը՝ քսանօրյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:

3) հարցազրույցի փուլ՝ Խորհուրդը բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում անցկացնում է հարցազրույց՝ հարցազրույցի անցկացման օրվա և վայրի մասին տեղեկատվությունն Աշխատակազմի միջոցով հարցազրույցն անցկացնելուց առնվազն երեք օր առաջ հրապարակելով Աշխատակազմի պաշտոնական կայքէջում: Հարցազրույցն իրականացվում է հետևյալ փուլերով՝

ա. Հարցազրույցի փուլում Խորհրդի կողմից հարցազրույցի ձևով ստուգվում են տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար անհրաժեշտ ղեկավարման և կառավարչական հմտությունների տիրապետման, ինչպես նաև տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար անհրաժեշտ այլ անձնական հատկանիշները (ինքնատիրապետում, վարվեցողություն, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ պաշտոնեական և արտապաշտոնեական հարաբերություններում, վերլուծական կարողություններ և այլն):

բ. Համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի վերաբերյալ (օրենքի կամ այլ իրավական ակտի նորմի, դատական ակտում արտահայտված դիրքորոշումներ և այլն) թեկնածուի կողմից իրականացվող վերլուծություն ու դիրքորոշման ներկայացում՝ կարճ ժամանակահատվածում հանպատրաստից կողմնորոշվելու, ինքնատիրապետման, վարվեցողության, հաղորդակցման հմտությունները, վերլուծական կարողությունները և տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար անհրաժեշտ որակները գնահատելու համար:

4) արդյունքների ամփոփման փուլ՝ Խորհրդի յուրաքանչյուր անդամին տրամադրվում է հարցաթերթ, որտեղ նշվում են գնահատման ենթակա հատկանիշները: Խորհրդի յուրաքանչյուր անդամ գնահատում է յուրաքանչյուր թեկնածուին՝ նշելով իր նկատառումները գնահատվող հատկանիշների վերաբերյալ: Հարցազրույցի արդյունքում Խորհուրդը կազմում է մրցույթում հաղթող

ճանաչվածների ցուցակ, որտեղ ներառվում են միավորների հանրագումարի արդյունքով առավելագույն միավորներ ստացած առնվազն երկու և առավելագույնը երեք թեկնածուները՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել մեկ թեկնածու:

7. Թեկնածուների ցանկը կազմելուց հետո՝ երկու օրվա ընթացքում, Խորհուրդը Կառավարություն է ներկայացնում մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակը՝ միաժամանակ այն հրապարակելով հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքէջում (www.azdarar.am) և Աշխատակազմի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

8. Կառավարությունը Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնում նշանակում կատարելու վերաբերյալ հարցը քննարկում և համապատասխան որոշում է կայացնում Խորհրդի կողմից թեկնածուներին ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում:

9. Խորհուրդը մրցույթում հաղթող չճանաչվելու կամ Կառավարության կողմից համապատասխան նշանակում չկատարելու դեպքում ոչ ուշ, քան երեսնօրյա ժամկետում նշանակում է նոր մրցույթ:

Հոդված 20. Հակակոռուպցիոն կոմիտեի այլ պաշտոններում նշանակելը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալներին սույն օրենքով սահմանված կարգով պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետը:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի մյուս ծառայողներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:

3. Հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է Հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղարը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Հակակոռուպցիոն կոմիտեում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:

Հոդված 21. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի երդումը

1. Հակակոռուպցիոն կոմիտեում առաջին անգամ պաշտոնի նշանակվող անձինք Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի սահմանած կարգով Հայաստանի Հանրապետության դրոշի առջև տալիս են հետևյալ բովանդակությամբ երդում.

«Ես՝ (անուն, հայրանուն, ազգանուն), պաշտոն ստանձնելով Հակակոռուպցիոն կոմիտեում, երդվում եմ՝

հավատարմորեն ծառայել Հայաստանի Հանրապետության ժողովրդին, խստագույնս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, կոռուպցիոն բնույթի հանցավոր ոտնձգություններից պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, նպաստել հասարակությունում կոռուպցիայի դեմ գրո հանդուրժողականության ձևավորմանը, անվերապահորեն և բարեխղճորեն կատարել իմ պարտականությունները»:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը երդում տալիս է մեկ անգամ՝ անհատական կարգով, երդման տեքստն ընթերցելու միջոցով:

3. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը ստորագրում է իր ընթերցած երդման տեքստը, որը պահպանվում է նրա անձնական գործում:

Հոդված 22. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կադրերի ռեզերվը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները գրանցվում են կադրերի ռեզերվում հաստիքների կրճատման, Հակակոռուպցիոն կոմիտեի մարմնի կամ ստորաբաժանումների լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, եթե Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին հավասարազոր պաշտոնում նշանակելը հնարավոր չէ, կամ նա գրավոր հրաժարվում է այլ հավասարազոր կամ ավելի բարձր կամ ավելի ցածր պաշտոնի նշանակվելուց:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված պաշտոնները Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին առաջարկվում են ըստ հերթականության:

3. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների՝ կադրերի ռեզերվում գտնվելու առավելագույն ժամկետը վեց ամիս է, բայց ոչ ավելի, քան սույն օրենքով սահմանված՝ Հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիքը լրանալը, իսկ ծառայության ժամկետը սույն օրենքով սահմանված կարգով երկարաձգված լինելու դեպքում՝ մինչև երկարաձգված ժամկետը լրանալը:

4. Եթե Հակակոռուպցիոն կոմիտեի կադրերի ռեզերվում գտնվող անձն իր դիմումի համաձայն հանվում է ռեզերվից, ապա նրա ստաժը հաշվարկվում է կադրերի ռեզերվում փաստացի գտնվելու ժամանակահատվածին համապատասխան:

5. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներին կադրերի ռեզերվում գտնվելու առաջին երկու ամիսների համար վճարվում է նրանց զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափը: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի՝ իր դիմումի հիման վրա երկու ամսից շուտ կադրերի ռեզերվից դուրս

գալու դեպքում վճարումն իրականացվում է կադրերի ռեգերվում գտնվելու փաստացի ժամանակահատվածին համապատասխան:

6. Սույն օրենքի հիման վրա Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներին կադրերի ռեգերվում գրանցելու և կադրերի ռեգերվից հանելու կարգը հաստատում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:

Հոդված 23. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ կիրառվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված սահմանափակումները:

Հոդված 24. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին պաշտոնից ազատելը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը՝ բացառությամբ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալի, պաշտոնից ազատվում է՝

- 1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցման դեպքում.
- 2) անձնական նախաձեռնությամբ՝ գրավոր դիմումի հիման վրա, այդ թվում՝ 20 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժը լրանալու կապակցությամբ.
- 3) սույն օրենքով նախատեսված սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ, եթե սույն օրենքով սահմանված կարգով այն չի երկարաձգվել.
- 4) հաստիքների կրճատման, Հակակոռուպցիոն կոմիտեի լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, եթե Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողին համապատասխան պաշտոնում նշանակելը հնարավոր չէ, և հաստիքների կրճատումը պայմանավորված է հաստիքների ընդհանուր թվի կրճատմամբ.
- 5) հիվանդության կամ ֆիզիկական արատի պատճառով ծառայությանը ոչ պիտանի լինելու դեպքում.
- 6) օրինական ուժի մեջ մտած դատական ակտով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու դեպքում.
- 7) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա մահացած հայտարարվելու կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում.

- 8) եթե նրա նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է կամ քրեական հետապնդում չի իրականացվել ոչ արդարացնող հիմքով.
- 9) նրա նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում.
- 10) նրա նկատմամբ պաշտոնից ազատում կարգապահական տույժ նշանակելու դեպքում.
- 11) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ավելի քան 140 օր ծառայության չներկայանալու դեպքում՝ չհաշված հղիության և ծննդաբերության կամ երեխային խնամելու համար արձակուրդը.
- 12) ատեստավորման արդյունքներով զբաղեցրած պաշտոնին նրա չհամապատասխանելու դեպքում.
- 13) սույն օրենքով նախատեսված ատեստավորմանը երկու անգամ անընդմեջ անհարգելի պատճառներով չներկայանալու դեպքում.
- 14) սույն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանափակումներից որևէ մեկի ի հայտ գալու և դեպքում.
- 15) սույն օրենքի պահանջների խախտմամբ պաշտոնի նշանակված լինելու դեպքում:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի պարտականությունները համարվում են դադարած նրա մահվան դեպքում:

3. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալի լիազորությունները վաղաժամկետ դադարելու դեպքերն են՝

- 1) պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալը.
- 2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը կորցնելը.
- 3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նրան անգործունակ, անհայտ բացակայող ճանաչվելը կամ մահացած հայտարարվելը.
- 4) նրա մահը.
- 5) նրա նկատմամբ կայացված դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայությունը.
- 6) նրա նկատմամբ կայացված՝ ոչ արդարացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման առկայությունը.
- 7) հրաժարականի դիմումը ՀՀ կառավարություն ներկայացնելը և վերջինիս կողմից այն հաստատելը:

4. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են, եթե՝

- 1) նա պաշտոնավարման ընթացքում ձեռք է բերել հիվանդություն կամ ֆիզիկական արատ, որը տևական ժամանակահատվածով խոչընդոտում է կամ խոչընդոտելու է իր պաշտոնական պարտականությունների կատարմանը.
- 2) ի հայտ է եկել սույն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանափակումներից որևէ մեկը.
- 3) նա խախտել է «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված սահմանափակումները և անհամատեղելիության պահանջները.
- 4) նա խախտել է քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքը.
- 5) ի հայտ են եկել փաստեր, որ նա նշանակման պահին չի համապատասխանել ներկայացվող պահանջներին:

5. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի լիազորությունների ժամկետը լրանում է նրա նշանակման օրվան հաջորդող վեցերորդ տարվա նույն օրը:

Հոդված 25. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների դասային աստիճանները

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներին շնորհվում են հետևյալ դասային աստիճանները.

- 1) արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդական.
- 2) արդարադատության երրորդ դասի պետական խորհրդական.
- 3) արդարադատության առաջին դասի խորհրդական.
- 4) արդարադատության երկրորդ դասի խորհրդական.
- 5) արդարադատության երրորդ դասի խորհրդական.
- 6) առաջին դասի խորհրդական.
- 7) երկրորդ դասի խորհրդական.
- 8) երրորդ դասի խորհրդական:

2. Արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդականի և արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճանները բարձրագույն դասային աստիճաններ են, որոնք շնորհվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

3. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների մյուս դասային աստիճանները շնորհում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:

4. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներին դասային աստիճանները շնորհվում են անհատական կարգով՝ ցմահ:

5. Սույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 9-րդ և 14-րդ կետերով նախատեսված հիմքերով պաշտոնից ազատվելու դեպքում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը կարող է գրկվել Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայության դասային աստիճանից՝ տվյալ դասային աստիճանը շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ:

Հոդված 26. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների պաշտոններին համապատասխանող դասային աստիճանները

1. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանն արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճանն է, իսկ ստորին սահմանը՝ արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի պաշտոնին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանն արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճանն է, իսկ ստորին սահմանը՝ արդարադատության առաջին դասի խորհրդականի:

3. Բարձրագույն պաշտոնի երրորդ ենթախմբի և գլխավոր պաշտոնի առաջին ենթախմբի պաշտոններին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանն արդարադատության առաջին դասի խորհրդականի դասային աստիճանն է, իսկ ստորին սահմանը՝ արդարադատության երկրորդ դասի խորհրդականի:

4. Գլխավոր պաշտոնի երկրորդ և երրորդ ենթախմբի պաշտոններին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանն արդարադատության երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճանն է, իսկ ստորին սահմանը՝ արդարադատության երրորդ դասի խորհրդականի:

5. Առաջատար պաշտոնի առաջին և երկրորդ ենթախմբի պաշտոններին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանն արդարադատության երրորդ դասի խորհրդականի դասային աստիճանն է:

6. Առաջատար պաշտոնի երրորդ ենթախմբի և կրտսեր պաշտոնի առաջին ենթախմբի պաշտոններին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանն առաջին դասի խորհրդականի դասային աստիճանն է:

7. Կրտսեր պաշտոնի երկրորդ ենթախմբի պաշտոններին համապատասխանող դասային աստիճանի վերին սահմանը երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճանն է:

8. Այլ մարմիններում հանրային ծառայություն անցած (աշխատած) և զինվորական կամ հատուկ կոչում (դասային աստիճան, որակավորման դաս)

ունեցող անձանց Հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոնի նշանակելիս նրանց զինվորական կամ հատուկ կոչումը (դասային աստիճան, որակավորման դաս) համապատասխանեցվում է հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի դասային աստիճանին: Զինվորական կամ հատուկ կոչումների (դասային աստիճանների, որակավորման դասերի) համապատասխանությունը սույն օրենքով սահմանված դասային աստիճաններին սահմանում է Կառավարությունը:

Հոդված 27. Դասային աստիճանների շնորհման ժամկետները

1. Երրորդ դասի խորհրդականի դասային աստիճանն սկզբնական դասային աստիճան է և շնորհվում է Հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոնի նշանակվելիս, բացառությամբ սույն օրենքի 26-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված դեպքի: Հակակոռուպցիոն կոմիտեում մյուս պաշտոններում նշանակվելիս ծառայողին շնորհվում է սույն օրենքի 26-րդ հոդվածով սահմանված՝ տվյալ պաշտոնին համապատասխանող նվազագույն դասային աստիճանը:

2. Եթե սույն օրենքի 26-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված դասային աստիճանի համապատասխանեցման արդյունքում այն ավելի բարձր է Հակակոռուպցիոն կոմիտեում տվյալ պաշտոնին նշանակվելու համար սույն օրենքի 26-րդ հոդվածով սահմանված առավելագույն դասային աստիճանից, ապա շնորհվում է տվյալ պաշտոնի համար սահմանված առավելագույն դասային աստիճանից մեկ աստիճան բարձր դասային աստիճան:

3. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներին դասային աստիճանները շնորհվում են հերթականության կարգով, զբաղեցրած պաշտոնի համար սահմանված առավելագույն դասային աստիճանի սահմաններում, նախորդ դասային աստիճանում ծառայության սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

4. Սույն օրենքով սահմանված կարգով հերթական դասային աստիճանի շնորհման համար սահմանվում են ծառայության հետևյալ ժամկետները.

- 1) երրորդ դասի խորհրդականի դասային աստիճան ունեցողի համար՝ 2 տարի.
- 2) երկրորդ դասի խորհրդականի դասային աստիճան ունեցողի համար՝ 3 տարի.
- 3) առաջին դասի խորհրդականի դասային աստիճան ունեցողի համար՝ 3 տարի.
- 4) արդարադատության երրորդ դասի խորհրդականի դասային աստիճան ունեցողի համար՝ 4 տարի.
- 5) արդարադատության երկրորդ դասի դասային աստիճան ունեցողի համար՝ 5 տարի:

5. Արդարադատության առաջին դասի խորհրդականի դասային աստիճան ունեցող ծառայողին բարձրագույն դասային աստիճան շնորհելու համար ծառայության ժամկետ չի սահմանվում:

6. Նախորդ դասային աստիճանը կրելու ժամկետը հաշվարկվում է այդ դասային աստիճանը շնորհելու մասին իրավական ակտն ստորագրելու հաջորդ օրվանից, իսկ սույն օրենքի 26-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված դասային աստիճանի համապատասխանեցման արդյունքում՝ զինվորական կամ այլ հատուկ կոչման շնորհման իրավական ակտի ստորագրման հաջորդ օրվանից:

7. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի հերթական դասային աստիճանի շնորհումը հետաձգվում է, եթե՝

1) ատեստավորումից հետո որոշում է ընդունվել ատեստավորումը հետաձգելու և նրան վերապատրաստման գործուղելու մասին.

2) նա ունի կարգապահական տույժ.

3) նրա լիազորությունները օրենքով սահմանված կարգով կասեցվել են կամ կատարվում է ծառայողական քննություն:

8. Հերթական դասային աստիճանի շնորհման հետաձգման՝ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված հիմքերը վերանալուց հետո՝ 15-օրյա ընթացքում, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին շնորհվում է հերթական դասային աստիճանը:

ԳԼՈՒԽ 5

ՀԱԿԱԿՈՐՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՏԵՍԱԿՈՐՈՒՄԸ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ՊԱՏԱՆԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 28. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի իրավունքները

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողն իրավունք ունի՝

1) ծանոթանալու իր անձնական գործի բոլոր նյութերին, իր գործունեության գնահատագրերին և այլ փաստաթղթերի, ինչպես նաև ներկայացնելու պարզաբանումներ.

2) սահմանված կարգով ստանալու ծառայողական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր.

3) իր իրավասության սահմաններում քննարկելու հարցեր և ընդունելու որոշումներ.

4) ստանալու օրենքով նախատեսված վարձատրություն.

5) իրավական պաշտպանության, սոցիալական պաշտպանության և ապահովության.

6) սահմանված կարգով մասնակցելու ծառայողական առաջխաղացմանը և ստանալու իր պաշտոնին համապատասխանող ավելի բարձր դասային աստիճան.

7) սահմանված կարգով վերապատրաստվելու պետական բյուջեի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին.

8) ներկայացնելու առաջարկություններ հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության կատարելագործման վերաբերյալ:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողն ունի օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

3. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները և նրա ընտանիքի անդամները գտնվում են պետության պաշտպանության ներքո: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի, նրա ընտանիքի անդամների կամ նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական տարածքների անձեռնմխելիության նկատմամբ ոչ իրավաչափ ներգործության սպառնալիքի դեպքում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողն անվտանգությունն ապահովելու նպատակով իրավունք ունի դիմելու Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին:

Հոդված 29. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի պարտականությունները

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը պարտավոր է՝

1) յոթրապետել զբաղեցրած պաշտոնում իր իրավունքներն ու պարտականությունները սահմանող իրավական ակտերին.

2) կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.

3) ապահովել պահանջվող մասնագիտական որակավորում և գործնական հմտություններ.

4) իր լիազորություններն իրականացնելիս ապահովել մարդու և քաղաքացու իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը.

5) պահպանել ծառայողական կարգապահությունը.

6) պահպանել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող տեղեկատվության հետ աշխատելու համար սահմանված պահանջները, այդ թվում՝ պաշտոնավարումը դադարեցնելուց հետո.

7) Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի սահմանած կարգով իրականացնել հերթապահություն.

8) սույն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում անցնել ատեստավորում և վերապատրաստում.

9) պահպանել Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի համար սահմանված սահմանափակումները և անհամատեղելիության պահանջները:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողն ունի օրենքով սահմանված այլ պարտականություններ:

Հոդված 30. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ կիրառվող խրախուսման միջոցները

1. Երկարամյա ծառայության, ինչպես նաև ծառայողական պարտականությունները և առաջադրանքները պատշաճ կատարելու և առանձնակի ցուցանիշների համար հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսման հետևյալ միջոցները.

1) շնորհակալության հայտարարում.

2) միանվագ դրամական պարգևատրում.

3) հուշանվերով պարգևատրում.

4) լրացուցիչ վճարովի տասնօրյա արձակուրդի տրամադրում.

5) մեդալով կամ կրծքանշանով պարգևատրում.

6) արտահերթ դասային աստիճանի շնորհում.

7) տվյալ պաշտոնի համար նախատեսված դասային աստիճանի վերին սահմանից մեկ աստիճան բարձր դասային աստիճանի շնորհում:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ, որպես խրախուսանք, կարող է կիրառվել նախկինում նշանակված կարգապահական տույժը ժամկետից շուտ հանելը:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված խրախուսման միջոցը Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ ծառայության ամբողջ ընթացքում կարող է կիրառվել մեկ անգամ:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 1-5-րդ կետերով սահմանված խրախուսման տեսակները կիրառում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:

5. Սույն հոդվածի 1-ին մասի 6-7-րդ կետերով սահմանված խրախուսման տեսակը կիրառում է նման դասային աստիճանի շնորհելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

6. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված խրախուսման միջոցը կիրառում է կարգապահական տույժ նշանակած պաշտոնատար անձը:

7. Հակակոռուպցիոն կոմիտեի բարձրագույն խմբի երրորդ ենթախմբի, գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոնների խմբերում պաշտոն զբաղեցնող ծառայողներին խրախուսման ներկայացնելու կարգը սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:

Հոդված 31. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությանն օժանդակող անձանց պարգևատրումը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությանն օժանդակող անձինք Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից կարող են պարգևատրվել շնորհակալագրով, հուշանվերով, դրամական պարգևատրմամբ:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությանն օժանդակող անձանց պարգևատրման կարգը սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:

Հոդված 32. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի կարգապահական պատասխանատվության հիմքերը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

1) Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները խախտելը.

2) իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը.

3) աշխատանքային ներքին կարգապահական կանոնները պարբերաբար խախտելը.

4) օրենքով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության կամ շահերի բախմանն առնչվող պահանջները չպահպանելը.

5) առաքիլության ստուգման բացասական արդյունքները:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի սահմանած տիպային կանոնների հիման վրա:

Հոդված 33. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը

1. Կարգապահական խախտման ծանրությունից ելնելով՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.

- 1) զգուշացում.
- 2) նկատողություն.
- 3) խիստ նկատողություն.
- 4) դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով.
- 5) պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով.
- 6) պաշտոնից ազատում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգապահական տույժերը Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ կիրառում է նրան պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված կարգապահական տույժը բարձրագույն դասային աստիճան ունեցող Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ չի կիրառվում:

Հոդված 34. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգը

1. Կարգապահական տույժը նշանակվում է, եթե վեց ամսից ավելի չի անցել կարգապահական խախտումը հայտնաբերելու օրվանից՝ չհաշված հիվանդության կամ արձակուրդում գտնվելու ժամանակաշրջանը. ընդ որում, նշանակվող տույժը պետք է համապատասխանի կատարված խախտման բնույթին:

2. Տույժերը ձևակերպվում են գրավոր: Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ կարգապահական տույժ:

3. Կարգապահական տույժի մասին Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը տեղեկացվում է դրա նշանակումից հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. Եթե կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա այն համարվում է մարված: Սույն մասի դրույթները չեն տարածվում սույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-6-րդ կետերով նախատեսված կարգապահական տույժերի վրա:

5. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ կարգապահական տույժերը կարող են կիրառվել միայն ծառայողական քննության արդյունքների հիման վրա:

6. Ծառայողական քննության ժամանակահատվածում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի լիազորությունները կարող են ժամանակավորապես դադարեցվել, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով՝ նա կխոչընդոտի ծառայողական քննության անցկացմանը: Այդ դեպքում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարձատրությունը պահպանվում է:

7. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելիս նրա լիազորությունները կարող են ժամանակավորապես դադարեցվել մինչև քրեական հետապնդման դադարեցումը կամ մինչև տվյալ գործով դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

8. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողն իրավունք ունի իր նկատմամբ նշանակված կարգապահական տույժի մասին որոշումն օրենքով սահմանված կարգով բողոքարկել դատարան:

9. Կարգապահական տույժի ենթարկված Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը չի ազատվում նույն արարքի համար օրենքով սահմանված քաղաքացիական, վարչական կամ քրեական պատասխանատվությունից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ կարգապահական տույժը կիրառվել է առաքինության ստուգման շրջանակներում կատարված խախտման հիմքով:

Հոդված 35. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի ատեստավորումը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի ատեստավորումն անցկացվում է զբաղեցրած պաշտոնին հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների համապատասխանությունը որոշելու, ինչպես նաև ծառայողական առաջխաղացման նպատակով:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը երեք տարին մեկ անցում է ատեստավորում:

3. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի արտահերթ ատեստավորումը կարող է անցկացվել հերթական ատեստավորումից առնվազն մեկ տարի հետո:

4. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի արտահերթ ատեստավորումն անցկացվում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի հրամանի հիման վրա կամ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի ցանկությամբ:

5. Ատեստավորումն անցկացվում է հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի անմիջական մասնակցությամբ:

6. Ատեստավորման ենթակա չեն՝

1) հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը և նրա տեղակալները.

2) հղի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները, եթե նրանք ատեստավորվելու ցանկություն չեն հայտնել.

3) տվյալ պաշտոնը մեկ տարուց պակաս ժամկետով զբաղեցնող ծառայողները, եթե նրանք ատեստավորվելու ցանկություն չեն հայտնել.

4) սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ տվյալ տարում պաշտոնից ազատվողները:

7. Հղիության և ծննդաբերության կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում գտնվող հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները ենթակա են ատեստավորման արձակուրդից վերադառնալուց հետո՝ ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե վերջիններս ցանկություն չեն հայտնել ավելի վաղ ատեստավորվելու համար:

8. Ատեստավորման ենթակա, սակայն արձակուրդում, գործուղման մեջ գտնվող, ինչպես նաև հակակոռուպցիոն կոմիտեի ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվող ծառայողները ենթակա են ատեստավորման աշխատանքի ներկայանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

9. Ատեստավորման ենթակա հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ տեղեկացվում են ատեստավորման անցկացման մասին:

10. Ատեստավորումից առնվազն երկու շաբաթ առաջ անմիջական ղեկավարը ներկայացնում է հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի ծառայողական բնութագիրը:

11. Ծառայողական բնութագիրը պետք է բովանդակի տվյալներ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի մասին, նրա գործնական, անձնական հատկանիշների և ծառայողական գործունեության արդյունքների հիմնավորված գնահատականը: Այդ գնահատականը հիմնվում է նախորդ ատեստավորումից հետո ընկած ժամանակահատվածում հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի կատարած աշխատանքների մասին անմիջական ղեկավարի եզրակացության վրա:

12. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողն ատեստավորում անցկացնելու օրվանից առնվազն մեկ շաբաթ առաջ պետք է ծանոթանա իր ծառայողական բնութագրին:

13. Սույն հոդվածով սահմանված կարգով ծառայողական բնութագիր չներկայացնելը չի կարող բացասաբար ազդել հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի ատեստավորման արդյունքների վրա:

14. Ատեստավորման հանձնաժողովի գործառույթներն իրականացնում է սույն օրենքով նախատեսված մրցութային հանձնաժողովը:

15. Հանձնաժողովն ատեստավորման արդյունքներով ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

1) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին.

2) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ ներառելով հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաջխաղացման ցուցակում.

3) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ լրացուցիչ վերապատրաստում անցնելու պայմանով.

4) համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով արտահերթ դասային աստիճան շնորհելու մասին.

5) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով ավելի ցածր պաշտոնի փոխադրելու մասին.

6) չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին՝ միջնորդելով պաշտոնից ազատելու մասին:

16. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողն իրավունք ունի ծանոթանալու ատեստավորման արդյունքներին և դրանց հետ համաձայն չլինելու դեպքում եռօրյա ժամկետում բողոքարկելու դրանք հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին:

17. Հանձնաժողովի եզրակացությունը հանձնաժողովի նախագահն ատեստավորման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, ներկայացնում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին:

18. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահն ատեստավորման արդյունքների հիման վրա լրացուցիչ վերապատրաստում անցնելու վերաբերյալ որոշումն ընդունում է ոչ ուշ, քան ատեստավորման արդյունքներն ստանալու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, իսկ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի ժամանակավոր անաշխատունակության և արձակուրդում գտնվելու, ինչպես նաև վերապատրաստման ժամանակ ատեստավորման արդյունքների հիման վրա համապատասխան որոշում է ընդունում նրա աշխատանքի ներկայանալու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում: Արտահերթ դասային աստիճան շնորհելու, ավելի ցածր պաշտոնի փոխադրելու կամ պաշտոնից ազատելու միջնորդությունների առկայության դեպքում Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը կարող է համապատասխան որոշում ընդունել նույն ժամկետում:

19. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների ատեստավորում անցկացնելու կարգը սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:

Հոդված 36. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վերապատրաստումը և մասնակցությունը կրթական այլ ծրագրերին

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները, բացառությամբ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալների, պարտավոր են ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ անցնել վերապատրաստում:

2. Պարտադիր վերապատրաստման ժամկետը կարող է տևել մինչև 1 ամիս:

3. Ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձանց վերապատրաստումն իրականացվում է «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, իսկ Օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոններ զբաղեցնող անձանց վերապատրաստումը՝ ենթաօրենսդրական ակտով սահմանված կարգով:

4. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողն իրավունք ունի մասնակցելու կրթական վերապատրաստման այլ ծրագրերի, համաժողովների և իրավաբանների մասնագիտական այլ հավաքների: Աշխատանքային ժամերին այդպիսի միջոցառումներին մասնակցելու կապակցությամբ բացակայելու թույլտվությունը տալիս է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի համապատասխան տեղակալը: Համապատասխան թույլտվություն ստացած ծառայողի՝ այդպիսի միջոցառումներին մասնակցելու կապակցությամբ բացակայությունը համարվում է հարգելի՝ աշխատավարձի պահպանմամբ:

ԳԼՈՒԽ 6

ՀԱԿԱԿՈՐՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ, ԱՎԵԼԻ ՑԱԾՐ ՊԱՇՏՈՆԻ ՓՈՒՍԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հոդված 37. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին գործուղելը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը, առանց իր համաձայնության, իր զբաղեցրած պաշտոնին համարժեք կամ ավելի բարձր պաշտոն զբաղեցնելու պայմանով կարող է մինչև մեկ տարի ժամկետով գործուղվել Հակակոռուպցիոն կոմիտեի կենտրոնական կամ տարածքային այլ ստորաբաժանում՝ վերջինիս կազմում հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի ժամանակավոր բացակայության, ծանրաբեռնվածության կամ թափուր հաստիքների պատճառով կամ քննչական խմբում ընդգրկվելու նպատակով: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը ենթակա չէ գործուղման, եթե, բժշկի եզրակացության համաձայն, դա կարող է վատթարացնել նրա կամ նրա հետ համատեղ ապրող ընտանիքի անդամի առողջական վիճակը:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին այլ վայր ծառայության գործուղելը կատարվում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի հրամանով:

3. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի գրավոր համաձայնությամբ գործուղումը կարող է երկարաձգվել:

4. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը գործուղման ավարտից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին առանց իր համաձայնության չի կարող գործուղվել:

Հոդված 38. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին ավելի ցածր պաշտոնի փոխադրելը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին չի կարելի ավելի ցածր պաշտոնի փոխադրել, բացառությամբ հետևյալ դեպքերի, երբ՝

1) ավելի ցածր պաշտոնի փոխադրելն իրականացվում է Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի դիմումի հիման վրա.

2) ավելի ցածր պաշտոնի փոխադրելն իրականացվում է որպես «պաշտոնի իջեցում» կարգապահական տույժ.

3) ավելի ցածր պաշտոնի փոխադրելն իրականացվում է սույն օրենքի 35-րդ հոդվածի 15-րդ մասի 5-րդ կետով սահմանված որոշման հիման վրա.

4) ավելի ցածր պաշտոնի փոխադրելն իրականացվում է հաստիքները կրճատվելիս՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի դիմումի հիման վրա:

Հոդված 39. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի լիազորությունները կասեցնելը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի լիազորությունները կասեցվում են՝

1) Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելիս՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով.

2) Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվելու դեպքում, եթե նրան վերագրվում է այնպիսի խախտում, որը, սույն օրենքի համաձայն, կարող է պաշտոնից ազատման հիմք հանդիսանալ՝ մինչև տվյալ հիմքով հարուցված կարգապահական վարույթով վերջնական որոշման ընդունումը:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալների լիազորությունները կասեցնում է նրանց պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում Հակակոռուպցիոն կոմիտեի մյուս ծառայողների լիազորությունները կասեցնում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի լիազորությունների կասեցման ժամանակահատվածում նրա հիմնական աշխատավարձը պահպանվում է:

ԳԼՈՒԽ 7

ՀԱԿԱԿՈՐՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԵՐԱՇՆԻՔՆԵՐԸ

Հոդված 40. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարձատրությունը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների վարձատրության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Հոդված 41. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի կենսաթոշակային և սոցիալական ապահովությունը, գույքային վնասի հատուցումը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի կենսաթոշակային ապահովությունը, պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամություն ունեցող անձ ձանաչվելու կամ զոհվելու դեպքում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի և նրա ընտանիքի անդամների սոցիալական ապահովությունն իրականացվում է «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողն ունի երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու իրավունք, որը ծագում է սույն օրենքի 46-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված 20 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ձեռք բերելու պահից: 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ քննիչի, իսկ 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ՝ դատախազի պաշտոն զբաղեցրած, ապա սույն օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի պաշտոնում նշանակված անձի երկարամյա ծառայության կենսաթոշակի հաշվարկը կատարվում է «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին կարող է տրվել միանվագ դրամական օգնություն՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով սահմանած դեպքերում, կարգով և չափով՝ աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից:

3. Ապահովագրության և ապահովագրական գումարների չափերը, հաշվարկման, վճարման կարգը և պայմանները սահմանում է Կառավարությունը:

4. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին կամ նրա ընտանիքի անդամներին պատճառված գույքային վնասը՝ պայմանավորված պարտականությունների կատարմամբ, հատուցում է պետությունը:

5. Վնասի հատուցման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով:

Հոդված 42. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի արձակուրդը

1 Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներն ունեն ամենամյա հերթական վճարովի արձակուրդի իրավունք՝ 30 աշխատանքային օր տևողությամբ, և լրացուցիչ արձակուրդի իրավունք, որի տևողությունը սահմանում է Կառավարությունը:

2 Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի ամենամյա հերթական վճարովի արձակուրդը պետք է տրամադրվի այնպես, որ այն չխոչընդոտի հակակոռուպցիոն կոմիտեի բնականոն գործունեության իրականացմանը:

Հոդված 43. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին բնակելի տարածությամբ ապահովելը

1 Անհրաժեշտության դեպքում, պայմանավորված Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին այլ վայր ծառայության նշանակմամբ կամ ծառայության գործուղմամբ, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողն ապահովվում է բնակելի տարածությամբ:

2 Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին բնակելի տարածությամբ ապահովելու անհնարինության դեպքում տրվում է դրամական փոխհատուցում՝ Կառավարության սահմանած կարգով և չափերով:

Հոդված 44. Հակակոռուպցիոն կոմիտեի խորհրդանիշը, ծառայողի համազգեստը, վկայականը և կնիքը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի խորհրդանիշի ձևը և նկարագիրը սահմանում է Կառավարությունը:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներին պետական բյուջեի միջոցների հաշվին տրվում է համազգեստ:

3. Հակակոռուպցիոն կոմիտեի համազգեստի, տարբերանշանների նկարագիրը և կրելու կարգը սահմանում է Կառավարությունը:

4. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներին տրվում են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի հաստատած միասնական նմուշի վկայականներ, ինչպես նաև նրանց անվամբ հակակոռուպցիոն կոմիտեում գրանցված և համարակալված անձնական կնիքներ:

Հոդված 45. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի անվտանգությունը և անձնական պաշտպանության միջոցները

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողն ունի ծառայողական հաշվեցուցակային զենք և անձնական պաշտպանության հատուկ միջոցներ պահելու և կրելու իրավունք: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին ծառայողական հաշվեցուցակային զենք և անձնական պաշտպանության հատուկ միջոցներ տրամադրում է Կառավարության լիազոր մարմինը:

2. Ծառայողական հաշվեցուցակային զենքը և անձնական պաշտպանության հատուկ միջոցները պահելու և կրելու կարգը սահմանվում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի հրամանով:

3. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի, նրա ընտանիքի անդամների կամ նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական տարածքների անձեռնմխելիության նկատմամբ ոչ իրավաչափ ներգործության սպառնալիքի դեպքում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի պահանջով իրավասու պետական մարմինները պարտավոր են անհապաղ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի, նրա ընտանիքի անդամների և նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական շինությունների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ:

ԳԼՈՒԽ 8

ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 46. Ծառայության ստաժ հաշվարկելը

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության, պետական եկամուտների կոմիտեի և ազգային անվտանգության ծառայության ծառայողներին, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության, դատախազության ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց Հակակոռուպցիոն կոմիտեի

համապատասխան ստորաբաժանումներում նշանակելիս Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում, քննչական կոմիտեում, պետական եկամուտների կոմիտեում, հատուկ քննչական ծառայությունում, ազգային անվտանգության ծառայությունում, դատախազությունում նրանց ունեցած ստաժը հաշվարկվում է Հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոն զբաղեցնելու ստաժի մեջ:

Հոդված 47. Նախկինում շնորհված կոչումները (դասային աստիճանները)

1. Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայության անցնելու կապակցությամբ սույն օրենքի 46-րդ հոդվածում նախատեսված մարմինների ծառայողներին նախկինում շնորհված կոչումները (դասային աստիճանները) պահպանվում են անկախ Հակակոռուպցիոն կոմիտեում զբաղեցրած պաշտոնից և համապատասխանեցվում են սույն օրենքով սահմանված դասային աստիճաններին:

2. Հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոնի նշանակվելիս տվյալ պաշտոնի համար սահմանված վերին սահմանից ավելի բարձր կոչում (դասային աստիճան) ունեցող անձանց սույն օրենքով համապատասխանեցված կոչումները պահպանվում են:

3. Սույն օրենքով սահմանված կարգով դասային աստիճաններ շնորհելիս նախկինում շնորհված կոչումով (դասային աստիճանով) ծառայության ժամկետը հաշվի է առնվում:

Հոդված 48. Օրենքն ուժի մեջ մտնելը և այլ դրույթներ

1. Սույն օրենքի 10-րդ, 15-21-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում սույն հոդվածի 12-րդ մասով սահմանված կարգով քսան ինքնավար թափուր պաշտոնների համալրման օրվան հաջորդող օրը՝ բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերի:

3. Սույն օրենքի 10-րդ, 15-21-րդ հոդվածներն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, Կառավարությունը սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի լեզվական գիտելիքների իմացության ստուգման կարգը և անհրաժեշտ մակարդակը, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցութային խորհրդի կազմում միջազգային փորձագետների ներգրավման կարգը:

4. Սույն օրենքի 10-րդ, 15-21-րդ հոդվածներն ուժի մեջ մտնելուց մեկ ամիս հետո՝ հնգօրյա ժամկետում, Վարչապետի աշխատակազմի ղեկավարը դիմում է

Ազգային ժողով, Կառավարությանը, Բարձրագույն դատական խորհուրդ, Մարդու իրավունքների պաշտպանին, Գլխավոր դատախազությանը՝ տասնօրյա ժամկետում մեկական անդամ նշանակելու համար:

5. Վարչապետի աշխատակազմի ղեկավարը սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում ապահովում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավման վերաբերյալ հայտարարության հրապարակումը:

6. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցութային խորհրդի ձևավորման հետ կապված սույն հոդվածով չսահմանված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքի 18-րդ հոդվածով սահմանված կարգով:

7. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների առաջին անգամ ընտրության մրցութային խորհրդի կազմում խորհրդակցական ձայնի իրավունքով կառավարության սահմանած կարգով ներգրավվում է մինչև երեք միջազգային փորձագետ: Միջազգային փորձագետների ներգրավումն իրականացվում է սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում: Որպես միջազգային փորձագետ կարող են ներգրավվել հակակոռուպցիոն ոլորտում առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն ունեցող անձինք:

8. Խորհուրդը կազմավորումից հետո մեկամսյա ժամկետում հաստատում է իր գործունեության աշխատակարգը, հարցազրույցի փուլի անցկացման նպատակով սահմանում է Հարցարանը, թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը, առավելագույն միավորի բաշխումը՝ ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների, գնահատման ենթակա պահանջների բովանդակությունը բացահայտող չափանիշները, չափանիշներից յուրաքանչյուրի գնահատման առավելագույն միավորը՝ համապատասխան պահանջի համար նախատեսված առավելագույն միավորի շրջանակներում, գնահատման և միավորների հաշվարկման կարգը:

9. Սույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված ակտերը հաստատելուց հետո՝ հնգօրյա ժամկետում, Մրցութային խորհուրդը Վարչապետի աշխատակազմի միջոցով հայտարարում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար մրցույթ:

10. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար անցկացվող մրցույթը և Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի նշանակումն իրականացվում է սույն օրենքի 19-րդ հոդվածով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները:

11. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, հաստատում է Հակակոռուպցիոն կոմիտեի կառուցվածքը, պաշտոնների, այդ թվում՝ հայեցողական պաշտոնների, տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց անվանացանկը և հաստիքացուցակը:

12. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված ակտերի հաստատումից հետո՝ եռօրյա ժամկետում Հատուկ քննչական ծառայության ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց հակակոռուպցիոն կոմիտեում քսան ինքնավար թափուր պաշտոնները ժամանակավոր զբաղեցնելու առաջարկություն է ներկայացնում: Սույն մասով նախատեսված անձինք, ներկայացված առաջարկությանն իրենց համաձայնությունը կամ անհամաձայնությունը ներկայացնում են առաջարկությունը ստանալու պահից՝ եռօրյա ժամկետում: Այն դեպքում, երբ համաձայնություն ներկայացրած անձանց թիվը գերազանցում է քսանը, ժամանակավոր պաշտոնի նշանակվելու նախապատվությունը տրվում է հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն հանցագործություններով նախաքննություն իրականացնող անձանց, իսկ եթե նրանց թիվը ևս գերազանցում է քսանը՝ ավելի երկար փորձառություն ունեցող անձին, իսկ հավասար փորձառության դեպքում՝ տարիքով ավագին: Սույն մասով նախատեսված անձինք նշանակվում են Հակակոռուպցիոն կոմիտեի համարժեք (բացառությամբ դրա անհնարինության դեպքում) պաշտոնների՝ որպես պաշտոնակատար՝ պահպանելով հատուկ քննչական ծառայությունում չօգտագործված ամենամյա արձակուրդի համար դրամական հատուցում ստանալու իրավունքը:

13. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը պաշտոնի նշանակվելուց հետո՝ երկամսյա ժամկետում հաստատում է Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների ընտրության համար ձևավորվող մրցութային հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Մրցութային հանձնաժողով) գործունեության համար անհրաժեշտ՝ սույն օրենքի 17-րդ հոդվածով սահմանված ակտերը, Մրցութային հանձնաժողովում քաղաքացիական հասարակության ներկայացուցչի ներգրավման կարգը, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցութի կարգը և պայմանները:

14. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի նշանակումից հետո՝ մեկամսյա ժամկետում, հաստատվում է Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձանց վերապատրաստման դասընթացի անցկացման կարգը:

15. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված ակտերի հաստատումից հետո՝ հնգօրյա ժամկետում դիմում է Հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականության մշակման լիազոր մարմին, Գլխավոր դատախազություն և Մարդու իրավունքների պաշտպանին՝ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաջին կազմի ընտրության համար ձևավորվող մրցութային հանձնաժողովում ներգրավվելու նպատակով տասնօրյա ժամկետում Հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականության մշակման լիազոր մարմնի երկու, Գլխավոր դատախազության և Մարդու իրավունքների պաշտպանի կողմից առաջադրած մեկական անդամներ նշանակելու համար: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաջին կազմի ընտրության համար ձևավորվող մրցութային հանձնաժողովում ներգրավվում է նաև քաղաքացիական հասարակության մեկ ներկայացուցիչ, որի ներառումն իրականացվում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի սահմանած քաղաքացիական հասարակության ներկայացուցչի ներգրավման կարգին համապատասխան՝ սույն մասով նախատեսված ժամկետում: Մրցութային հանձնաժողովի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են ներգրավվել նաև միջազգային փորձագետներ: Մրցույթի անցկացումն իրականացվում է սույն օրենքի 17-րդ հոդվածով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածով սահմանված առանձնահատկությունները:

16. Սույն հոդվածի 12-րդ մասով նախատեսված անձինք Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայող ընտրվելու նպատակով պետք է սույն օրենքով սահմանված կարգով մասնակցեն մրցույթի: Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչվելու և Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից համապատասխան պաշտոնի նշանակվելու, ինչպես նաև մրցույթում հաղթող չճանաչվելու դեպքում սույն հոդվածի 11-րդ մասով նախատեսված անձինք ազատվում են պաշտոնից:

17. Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների առաջին կազմի ընտրության նպատակով հայտերի ընդունման մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող երկշաբաթյա ժամկետում Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը և Արդարադատության նախարարն Արդարադատության ակադեմիայի ռեկտորին են ներկայացնում առարկայական կուրսերի (դասընթացների) կամ թեմաների վերաբերյալ իրենց առաջարկությունները՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ծրագրերում ներառելու համար: Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստումը և փորձաշրջանն

իրականացվում է «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքով Ակադեմիայի կառավարման խորհրդի որոշմամբ սահմանված կարգով՝ երկամսյա ժամկետում:

18. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը սույն օրենքի 17-րդ հոդվածի 14-րդ մասով սահմանված՝ ուսումնառությունից ազատված և կոմիտեի ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց, ցուցակը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում նշանակում է համապատասխան պաշտոնի: Նշանակումից հետո մեկ տարվա ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին Արդարադատության ակադեմիայի ռեկտորի հետ համատեղ սահմանում են սույն մասով նախատեսված անձանց վերապատրաստման կարգը և կազմակերպում է վերապատրաստման իրականացման գործընթացը:

19. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաջին կազմի դեպքում պաշտոնի կարող են նշանակվել սույն օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջին չհամապատասխանող անձինք՝ եթե նշանակումից հետո՝ երեք տարվա ընթացքում ներկայացնեն պահանջվող օտար լեզուների իմացության մակարդակը հավաստող փաստաթուղթ: Սույն մասով սահմանված ժամկետում օտար լեզուների իմացության մակարդակը հավաստող փաստաթուղթ չներկայացնելու դեպքում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողն ազատվում է պաշտոնից, իսկ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի դեպքում՝ լիազորությունները դադարեցվում են:

20. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում 2007 թվականի նոյեմբերի 28-ին ընդունված «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՕ-255-Ն օրենքը և դադարեցված է համարվում Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության գործունեությունը: Ղատախազի եւ քննիչի 20 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող ՀՀ հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձինք ձեռք են բերում երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու իրավունք: 2017 թվականի հուլիսի 1-ի դրությամբ քննիչի, իսկ 2014 թվականի հուլիսի 1-ի դրությամբ՝ դատախազի պաշտոն զբաղեցրած անձի երկարամյա ծառայության կենսաթոշակի հաշվարկը կատարվում է «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման եւ սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով:

21. Հակակոռուպցիոն կոմիտեի կառուցվածքի, պաշտոնների անվանացանկի և հաստիքացուցակի հաստատումից հետո մինչև «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված մրցութային կարգով հաստիքների համալրումը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի քաղաքացիական ծառայության հաստիքները կարող են

գբադեցվել Կառավարության սահմանած ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգով՝ այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության գործունեության դադարեցման արդյունքում քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գտնվող անձանց շրջանակից:

22. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ օրենքով սահմանված կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով քրեական գործերի հարուցման հարցի լուծումը և նախաքննության իրականացումը վերապահվում է Հակակոռուպցիոն կոմիտեին: Այլ քննչական մարմիններում գտնվող քրեական գործերը (նյութերը) ենթակա չեն փոխանցման Հակակոռուպցիոն կոմիտեին՝ բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի:

23. Սույն հոդվածի 12-րդ մասով նախատեսված անձանց նշանակումից հետո՝ Հատուկ քննչական ծառայությունում գտնվող կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով հարուցված քրեական գործերը (նյութերը), ինչպես նաև կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով քրեական գործի հարուցման փուլում գտնվող գործերը փոխանցվում են Հակակոռուպցիոն կոմիտեին:

24. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը այլ քննչական մարմիններում գտնվող կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով քրեական գործերը (նյութերը) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կարող է այդ մարմինների քննիչների վարույթից վերցնել և Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի համաձայնությամբ հանձնել Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթին:

Հոդված 49. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաջին ատեստավորումը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաջին ատեստավորումն անցկացվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց տասներկու ամիս հետո:

ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

**«ՀԱԿԱԿՈՐՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ**

Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունումը բխում է ՀՀ կառավարության 2019 թվականի

հոկտեմբերի 3-ի «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1332-Ն որոշումից (այսուհետ՝ Ռազմավարություն) և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի 650-Լ որոշման (այսուհետ՝ Գործունեության ծրագիր) 49.2-րդ կետի պահանջից:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները.

2019 թվականի նոյեմբերի 20-ին ձևավորվել է կոռուպցիայի դեմ պայքարում ինստիտուցիոնալ համակարգի բաղադրատարրերից առաջինը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով): Կոռուպցիայի դեմ պայքարին միտված գործողությունների արդյունավետությունն ապահովելու համար Հանձնաժողովի կայացմանն ու գործունեությանը զուգահեռ անհրաժեշտ է ապահովել նաև կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործառույթով և անկախության երաշխիքներով օժտված մասնագիտացված մարմնի առկայությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի առանձնահատկություններով պայմանավորված՝ հետաքննության և նախաքննության գործառույթները, կոռուպցիոն հանցագործություններով օպերատիվ-հետախուզական գործողությունները իրականացվում են տարբեր մարմինների կողմից, ինչն իր հերթին հանգեցնում է կոռուպցիոն հանցագործությունների քննության ապակենտրոնացվածության:

Միաժամանակ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը, անդամակցելով միջազգային մի շարք կառույցների, ստանձնել է կոռուպցիոն իրավախախտումների բացահայտման գործող կառուցակարգեր ստեղծելու պարտավորություն:

Այսպես, Միավորված ազգերի կազմակերպության կողմից ընդունված «Կոռուպցիայի դեմ կոնվենցիան» (այսուհետ՝ Կոնվենցիա), որն ընդունվել է 2003 թվականին և Հայաստանի Հանրապետության համար պարտադիր է դարձել 2007 թվականից, պարունակում է գործուն մեխանիզմներ, որոնք վերաբերում են նաև կոռուպցիայի կանխարգելման և բացահայտման մարմինների ստեղծմանը և դրանց լիազորությունների շրջանակին:

Կոնվենցիայի 36-րդ հոդվածով կոռուպցիայի բացահայտման մարմինների համար սահմանվել են որոշակի սկզբունքային դրույթներ:

Կոնվենցիայի 36-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է ապահովի այնպիսի մարմնի կամ մարմինների կամ անձանց առկայությունը, որոնք մասնագիտացած են կոռուպցիայի դեմ պայքարում՝ իրավապահ միջոցների օգնությամբ: Մասնակից պետության իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան՝ այդպիսի մարմնին կամ մարմիններին կամ անձանց պետք է անհրաժեշտ անկախություն ապահովվի, որպեսզի նրանք կարողանան կատարել իրենց գործառույթները առանց որևէ անհարկի ազդեցության: Այդպիսի անձինք կամ այդպիսի մարմնի կամ մարմինների աշխատակիցները իրենց խնդիրների կատարման համար պետք է օժտված լինեն պատշաճ որակավորմամբ և պաշարներով:¹»

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) շրջանակներում գործող Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցը Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի շրջանակներում իրականացնում է անդամ պետությունների հակակոռուպցիոն համակարգի գնահատում: Սույն ցանցին անդամակցում է նաև Հայաստանի Հանրապետությունը: Նշված նախաձեռնության շրջանակում 2018 թվականին իրականացվել է Հայաստանի Հանրապետության 4-րդ փուլի գնահատումը², որով ևս անդրադարձ է կատարվել Հակակոռուպցիոն իրավապահ մարմնի բացակայության հարցին: Մասնավորապես, գեկույցում անդրադառնալով այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիոն գործերի քննությունն իրականացվում են տարբեր մարմինների կողմից, արձանագրվում է, որ կոռուպցիոն գործերի քննությամբ դրական տեղաշարժ տեղի չի ունեցել և որ իրավապահ մարմինները ավելի շատ հակված են իրականացնելու քննություն միայն փոքր կոռուպցիոն հանցագործություններով: Ջեկույցով կարևորվում է կոռուպցիոն իրավապահ մարմիններին անկախության գործուն երաշխիքներով ապահովելու և նմանատիպ մարմինների գործունեությանն անհարկի միջամտություն չթույլատրելու անհրաժեշտությունը: Գնահատման արդյունքների ամփոփման հիման վրա խորհուրդ է տրվում ապահովել հակակոռուպցիոն իրավապահ մարմինների ղեկավարների թափանցիկ և մրցակցային ընտրություն՝ թեկնածուների արժանիքների և մասնագիտական որակների հաշվառմամբ: Կարևորվում է նաև հակակոռուպցիոն իրավապահ մարմիններին համապատասխան

¹ Տե՛ս բնօրինակը https://www.unodc.org/documents/treaties/UNCAC/Publications/Convention/08-50026_E.pdf

² <https://www.oecd.org/corruption/acn/OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report-July-2018-ENG.pdf> էջ 14,

միջոցներով ապահովելու հանգամանքը և աշխատակիցների մասնագիտացվածությունը:

Այսպիսով, կարելի է առանձնացնել այն սկզբունքային դրույթները, որոնք պետք է բնորոշ լինեն կոռուպցիայի դեմ պայքար մղող մարմիններին: Նման մարմինները պետք է լինեն անկախ, զերծ մնան անհարկի ազդեցությունից, օժտված լինեն պատշաճ նյութատեխնիկական պայմաններով, իսկ աշխատակիցները՝ ունենան բարձր որակավորում:

Հարկ է նշել նաև, որ միջազգային գործընկեր կազմակերպություններն իրենց հերթին բազմիցս բարձրացրել են նշված հարցը՝ պնդելով, որ Հայաստանում կոռուպցիոն հանցագործությունների քննության ապակենտրոնացվածությունը կոռուպցիոն հանցագործությունների արդյունավետ քննության հիմնական մարտահրավերներից է:

Հակակոռուպցիոն կոմիտեն՝ որպես կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործառնություն օժտված մասնագիտացված մարմին, կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի երկրորդ բաղադրատարրն է: Այն արդեն իսկ ստեղծված Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի, զուգահեռաբար ստեղծվող հակակոռուպցիոն դատարանի և ՀՀ Գլխավոր դատախազությունում կոռուպցիոն հանցագործությունների քննության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության հետ ամբողջացնելու է հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը:

Առաջարկվող կարգավորման բնույթը.

Հիմք ընդունելով միջազգային լավագույն փորձը, ինչպես նաև ՀՀ կառավարության Գործունեության ծրագիրը և Հակակոռուպցիոն ռազմավարությունը՝ Նախագծով առաջարկվում է ստեղծել կոռուպցիոն բնույթի հանցագործությունները քննող մասնագիտացված մարմին՝ Հակակոռուպցիոն կոմիտե:

Նախ, անդրադառնալով միջազգային փորձին՝ հարկ է նշել, որ մի շարք պետություններ ստեղծել են կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտման և քննության գործառնություն օժտված մարմիններ, որոնք, ընտրված մոդելների տարբերություններով հանդերձ, առաջնորդվում են միջազգայնորեն ընդունված սկզբունքներով:

Այսպես, **Ուկրաինայում** գործում է Ուկրաինայի ազգային հակակոռուպցիոն բյուրոն: Համաձայն ազգային հակակոռուպցիոն բյուրոյի (այսուհետ՝ Բյուրո) մասին

օրենքի³ առաջին հոդվածի՝ Բյուրոն պետական իրավապահ մարմին է, որը պատասխանատու է իր իրավասության հետ կապված կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերման, քննության, բացահայտման, ինչպես նաև կանխարգելման համար: Բյուրոյի ղեկավար կազմն ու անդամները ընտրվում են մրցութային խորհրդի կողմից՝ բաց մրցութի արդյունքում: Միաժամանակ Բյուրոյի գործունեության հաշվետվողականության և թափանցիկության ապահովման նպատակով այն իր գործունեության մասին հաշվետվություններ է հրապարակում և հասարակությանը տեղեկացնում է իր կատարած աշխատանքի արդյունքների մասին: Կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունավետություն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Բյուրոյի աշխատակիցները իրականացնում են և՛ օպերատիվ-հետախուզական գործունեություն, և՛ նախաքննություն:

Լատվիայում գործում է Կոռուպցիայի կանխարգելման և պայքարի բյուրո⁴ (այսուհետ՝ Բյուրո): Վերջինս ունի գործունեության հիմնական երեք ուղղություններ՝ կանխարգելիչ, հետաքննական և կրթական: Բյուրոն իրավասու է կիրառել վարչաիրավական ներգործության միջոցներ՝ օրենքով նախատեսված կոռուպցիոն բնույթի իրավախախտումների համար, ինչպես նաև իրականացնել հետաքննական և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ այն պաշտոնատար անձանց նկատմամբ, որոնք կասկածվում են կոռուպցիոն բնույթի հանցագործություններ կատարելու մեջ:

Կոսովոյում կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության մարմինը Հակակոռուպցիոն գործակալությունն⁵ է: Գործակալությունն ունի երեք բաժին՝ քննչական վարչություն, կոռուպցիայի կանխարգելման վարչություն և կառավարման վարչություն: Գործակալությունն իրավունք ունի նաև կոռուպցիոն հանցագործություններով հարուցված գործերով իրականացնել հետաքննություն:

Իսկ **Սլովակիայում** գործում է Կոռուպցիայի դեմ պայքարի բյուրոն, որը ստեղծվել է 2004 թվականին: Կոռուպցիայի դեմ պայքարի բյուրոն գործում է Ոստիկանության ուժերի ղեկավարության ներքո: Այն հիմնականում հետաքննական գործակալություն է, սակայն ունի նաև կոռուպցիայի կանխարգելման լիազորություններ:

³ <https://zakon.rada.gov.ua/laws/show/1698-18/ed20200703#Text>

⁴ <https://www.iap-association.org/NACP/Anti-Corruption-Models>

⁵ https://www.akk-ks.org/en/luftimi_i_korrupsioniit/162/zbatimi-i-ligijit/162 “Anti-Corruption Agency”

Լիտվայում գործում է Հատուկ քննչական ծառայությունը⁶: Ծառայությունը անկախ մարմին է, որը հաշվետու է միայն Նախագահի և Խորհրդարանի առջև: Սույն մարմինը գործում է «Հատուկ քննչական ծառայության» մասին օրենքի հիման վրա: Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն Ծառայությունը ունի հետևյալ գործառույթները.

1. Իրականացնել օպերատիվ-հետախուզական աշխատանքներ կոռուպցիայի հետ կապված հանցագործությունները բացահայտելու և կանխելու ուղղությամբ.

2. Իրականացնել կոռուպցիոն բնույթի հանցագործություններով նախաքննություն

3. Օրենքով սահմանված կարգով համագործակցել այլ իրավապահ մարմինների հետ

4. հավաքել, պահել, վերլուծել և ամփոփել կոռուպցիայի և հարակից սոցիալական երևույթների վերաբերյալ տեղեկատվություն

5. Իրավապահ այլ հաստատությունների հետ համատեղ իրականացնում են հանցագործությունների վերահսկողության և կանխարգելման գործողություններ

Ծառայությունը տարեկան և կիսամյակային հաղորդումներ է ներկայացնում Խորհրդարան: Գործունեության թափանցիկությունը ապահովելու նպատակով պարբերաբար հանդես է գալիս հրապարակումներով և զեկույցներով, սերտ համագործակցում է քաղաքացիական հասարակության և նրանց ներկայացուցիչների հետ:

Ռումինիայում գործում է Ազգային հակակոռուպցիոն ծառայությունը⁷, որը իրականացնում է կոռուպցիոն բնույթ ունեցող իրավախախտումների ուսումնասիրություն: Ծառայության իրավասության ներքո են գտնվում կոռուպցիոն հանցագործությունները քննությունը: Օրենքով Ծառայությանը տրվում է մի շարք հատուկ լիազորություններ.

- Գաղտնի հսկողության
- կապի միջոցների հսկողության
- գաղտնի հետաքննության
- ֆինանսական տվյալների և տեղեկատվական համակարգերի հասանելիության
- ֆինանսական գործարքների մոնիթորինգի և այլն:

Սինգապուրում գործում է Կոռուպցիոն գործերի հետաքննության բյուրոն⁸ (CPIB), որը հիմնադրվել է 1952 թվականին՝ որպես անկախ հակակոռուպցիոն

⁶ <https://www.stt.lt/en/legal-information/laws/4975>

⁷ <https://www.oecd.org/corruption/acn/39971975.pdf> էջ 86

⁸ <https://www.oecd.org/corruption/acn/39971975.pdf> էջ 52

գործակալություն: Դրա նպատակն է քննել և կանխել կոռուպցիան պետական և մասնավոր հատվածներում: Բյուրոյի հիմնական գործառնությունը կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ բողոքներ ստանալն ու քննելն է:

Համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի՝ Բյուրոն ունի հետևյալ լիազորությունները.

1. հանցագործությունների քննության լիազորություն
2. հետաքննության լիազորություն
3. հետախուզման և բռնագրավման լիազորություններ:

Նման մարմիններ գործում են նաև Բելգիայում՝ Կոռուպցիայի կանխարգելման կենտրոնական գրասենյակը, Խորվաթիայում՝ Կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության կանխարգելման գրասենյակը, Մալթայում՝ Կոռուպցիայի դեմ մշտական հանձնաժողովը⁹:

Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով այն համգամանքը, որ կոնկրետ երկրի փորձը կիրառելիս պետք է հաշվի առնել նաև այդ երկրի օրենսդրության ընդհանուր տրամաբանությունը, իրավական համակարգի կառուցվածքը և առանձնահատկությունները՝ համաձայն սույն Նախագծով առաջարկվող իրավակարգավորումների՝ Կոմիտեն, որը ստեղծվելու է որպես քննչական մարմին, կազմակերպելու և իրականացնելու է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով իր իրավասությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործությունների մինչդատական քրեական վարույթը: Նաև, հաշվի առնելով այն համգամանքը, որ ՀՀ Սահմանադրության 178-րդ հոդվածի համաձայն քննչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով, նախատեսվում է, որ Կոմիտեն քրեական վարույթ նախաձեռնելու հարցի լուծման նպատակով՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով իրականացնելու է օպերատիվ-հետախուզական գործունեություն: Սույն լիազորությունների ամբողջությունը հնարավորություն է տալու Կոմիտեին իրականացնել կոռուպցիոն հանցագործությունների ամբողջական և արդյունավետ քննություն:

Հարկ է նշել, որ ի տարբերություն վերոնշյալ մի շարք երկրների, որտեղ կոռուպցիոն բնույթի հանցագործություններով և՛ հետաքննությունը, և՛ օպերատիվ-հետախուզական գործունեությունը, և՛ նախաքննությունը իրականացվում է միևնույն անձի կողմից, հաշվի առնելով Նախագծով կոռուպցիոն հանցագործությունների

⁹ <https://www.oecd.org/corruption/acn/39971975.pdf>

քննության կենտրոնացվածությունը ապահովելու անհրաժեշտությունը, թեև հետաքննությունը, օպերատիվ-հետախուզական գործունեությունը, նախաքննությունն իրականացվելու են մեկ մարմնի՝ Կոմիտեի կողմից, այնուամենայնիվ, չարաշահումներից խուսափելու, արագ և արդյունավետ քննություն ապահովելու համար դրանք իրականացվելու են տարբեր ստորաբաժանումների կողմից: Միևնույն ժամանակ, Կոմիտեի ինքնավարության ապահովման նպատակով, նշված գործառույթներն իրականացնող ստորաբաժանումների կառուցվածքը սահմանվելու է Կոմիտեի կողմից:

Կոմիտեի գործունեության արդյունավետության տեսանկյունից կարևոր նշանակություն ունի վերջինիս կառուցվածքը: Կոմիտեն կազմված է լինելու կառուցվածքային մասնագիտական ստորաբաժանումներից (այդ թվում՝ տարածքային ստորաբաժանումներից) և աջակցող ստորաբաժանումներից: Հակակոռուպցիոն կոմիտեի ստորաբաժանումները բաղկացած են վարչություններից և բաժիններից: Կոմիտեի կազմում գործելու են օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումներ:

Կոմիտեի մասնագիտական կազմը համալրվելու է համապատասխան մասնագիտական պատրաստում անցած կադրերի ներգրավման եղանակով:

Միաժամանակ հարկ է ընդգծել, որ կոռուպցիոն հանցագործությունների քննությամբ զբաղվող քննիչների հաստիքների և գործիքակազմի փոխանցումը չի կրելու մեխանիկական բնույթ: Հակակոռուպցիոն կոմիտեի կազմում նշանակումները կատարվելու է մրցութային կարգով:

Մասնավորապես, Կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով Կոմիտեի նախագահը կազմավորելու է մրցութային հանձնաժողովը: Ընդ որում, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանումների աշխատողների մրցութային կարգը եւ պայմանները, հաշվի առնելով վերջիններիս գործունեության առանձնահատկությունը, սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:

Հանձնաժողովի կազմի մեջ մտնում են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից նշանակված Հակակոռուպցիոն կոմիտեի 3 ծառայող, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից առաջադրած 1 անձ, քաղաքացիական հասարակության 1 ներկայացուցիչ:

Նախագծով առաջարկվող մրցույթը ինքնավար պաշտոնների թեկնածուների ընտրության դեպքում կազմված է հետևյալ փուլերից.

փաստաթղթերի ուսումնասիրության փուլ՝ դիմումը և կից փաստաթղթերը (այսուհետ նաև՝ հայտ) ստանալուց հետո՝ երեք օրվա ընթացքում, Հանձնաժողովը համադրում է մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերի, բացառությամբ բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկի, համապատասխանությունը սույն օրենքով նախատեսված պահանջներին: Թեկնածուն իրավունք ունի պարզաբանումներ տալու իր փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների վերաբերյալ: Սահմանված փաստաթղթերը թերի լինելու դեպքում այդ մասին հայտատուին տեղեկացվում է նույն պահին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մեկօրյա ժամկետում: Թերությունները կարող են վերացվել հայտերի ընդունման համար սահմանված ժամկետի ընթացքում: Փաստաթղթերը ներկայացնելու համար սահմանված ժամկետի խախտմամբ կամ օրենքով նախատեսված պահանջները չբավարարող հայտերի ընդունումը մերժվում է, և դրանք Հանձնաժողովի կողմից ենթակա են վերադարձման երեք աշխատանքային օրվա ընթացքում: Մրցույթն անցկացվում է նաև այն դեպքերում, երբ մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ մասնակից:

Թեստավորման փուլը անցկացվում է փաստաթղթերի ուսումնասիրության փուլի ավարտից հետո տասնօրյա ժամկետում Հանձնաժողովը փաստաթղթերի ուսումնասիրության փուլը հաղթահարած մասնակիցների համար կազմակերպում է թեստավորման փուլը, որի ընթացքում ստուգվում են մասնակիցների մասնագիտական գիտելիքները: Թեստավորման անցկացման նույն օրը կազմվում և Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակվում է թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցների ցուցակը, ինչպես նաև հարցազրույցի օրը և վայրը:

Բարեվարքության ուսումնասիրության փուլ՝ Հանձնաժողովը թեստավորման փուլի ավարտից հետո՝ մեկօրյա ժամկետում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցների բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը՝ մեկամսյա ժամկետում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով:

Հարցազրույցի փուլի ընթացքում Հանձնաժողովը բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում անցկացնում է հարցազրույց՝ հարցազրույցի անցկացման օրվա և վայրի մասին տեղեկատվությունը հարցազրույցն անցկացնելուց առնվազն երեք օր առաջ հրապարակելով իր պաշտոնական կայքէջում: Հարցազրույցի փուլին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել նաև հոգեբան, որին ներգրավում է Հանձնաժողովը: Հարցազրույցի փուլում Հանձնաժողովի անդամները

գնահատում են մասնակցի աշխատանքային ձեռքբերումները, վերլուծական կարողությունները, տարբեր իրավիճակներում վարվեցողությունը, պատասխանատվության զգացումը, հաղորդակցման հմտությունները, տվյալ պաշտոնում նշանակվելու նրա շարժառիթը, ակնկալիքները և այդ պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ այլ անձնական որակները և արժանիքները: Հարցազրույցի ընթացքում մասնակցին կարող են նաև հարցադրումներ կատարվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացության տվյալների վերաբերյալ: Մասնակցին տրվող հարցերը չպետք է ունենան նրա իրավաբանական գիտելիքները ստուգելու նպատակ:

Արդյունքների ամփոփման փուլում Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամին տրամադրվում է հարցաթերթ, որտեղ նշվում են գնահատման ենթակա հատկանիշները: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ գնահատում է յուրաքանչյուր մասնակցին՝ նշելով իր նկատառումները գնահատվող հատկանիշների վերաբերյալ: Հարցազրույցի արդյունքում Հանձնաժողովը կազմում է մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակ, որտեղ ներառվում են միավորների հանրագումարի արդյունքով առավելագույն միավորներ ստացած թեկնածուները: Եթե մասնակիցների միավորների հավասարության պատճառով հնարավոր չէ որոշել հաղթողին, ապա անցկացվում է բաց քվեարկություն, որի ընթացքում Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ իր ներքին համոզմամբ քվեարկում է առավելագույն հավասար ձայներ ստացած այս կամ այն թեկնածուի օգտին: Քվեարկության ժամանակ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Մրցույթի վերջնական արդյունքները մեկօրյա ժամկետում հրապարակվում են Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

Մասնակցի իրավունքները ապահովելու նպատակով Նախագծով ամրագրվել է նաև մրցույթի արդյունքները գրավոր բողոքարկելու հնարավորություն: Մասնակիցը մրցույթի արդյունքները հրապարակվելուց հետո երկօրյա ժամկետում կարող է դրանք գրավոր բողոքարկել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին: Բողոքարկման վերաբերյալ պատասխանը տրվում է մեկ օրվա ընթացքում:

Մրցութային կարգով է անցկացվելու նաև Կոմիտեի նախագահի ընտրությունները: Ընդ որում, հիմք ընդունելով միջազգային կառույցների կողմից կատարված դիտարկումները, Նախագծով առաջարկվում է ստեղծել Մրցութային խորհուրդ (այսուհետ՝ խորհուրդ), որում ներառվելու են տարբեր մարմինների

ներկայացուցիչներ, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության անդամներ: Մասնավորապես Խորհրդում ներգրավվելու են Կառավարության, Ազգային ժողովի Խորհրդի, Բարձրագույն դատական Խորհրդի, Գլխավոր դատախազի, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից նշանակած մեկական թեկնածու և քաղաքացիական հասարակության երկու ներկայացուցիչ: Խորհրդում ընդգրկվող թեկնածուներին նախագծով առաջադրվում է որոշակի պահանջներ, որը նպատակ է հետապնդում Խորհրդի կազմում բարձր մասնագիտական և բարոյական հատկանիշներ ունեցող անձանց ներգրավումը: Մասնավորապես, Խորհրդի անդամ բացառությամբ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչ, կարող է նշանակվել բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն կրթության որակավորման աստիճան կամ օտարերկրյա պետությունում ձեռք բերած համապատասխան որակավորման աստիճան, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում, բարձր մասնագիտական և բարոյական հատկանիշներ ունեցող, կուսակցական պատկանելիություն չունեցող յուրաքանչյուր ոք, ով ունի քրեական մասնագիտացման դատավորի, դատախազի, քննիչի, հետաքննիչի, օպերլիազորի կամ փաստաբանի կամ հակակոռուպցիոն ոլորտում քաղաքականության մշակման կամ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում գործունեության առնվազն 5 տարվա ստաժ կամ տվյալ պաշտոններում առնվազն 5 տարվա ընդհանուր՝ իրար փոխլրացնող ստաժ: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների առաջին անգամ ընտրության Խորհրդի կազմում Խորհրդակցական ձայնի իրավունքով ներգրավվում է նաև երեք միջազգային փորձագետ: Որպես միջազգային փորձագետ կարող են ներգրավվել հակակոռուպցիոն ոլորտում առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն ունեցող անձինք: Միջազգային փորձագետների ներգրավման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

Խորհրդի գործունեության թափանցիկությունը ապահովելու համար Խորհրդի նիստերը անցկացվում են բաց: Քաղաքացիական հասարակության, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել նիստերին: Խորհրդի նիստերը նաև տեսաձայնագրվում են:

Կոմիտեի նախագահի ընտրությունը իրականացվում է հետևյալ փուլերով.

- 1) փաստաթղթերի ուսումնասիրության փուլ.
- 2) բարեվարքության ուսումնասիրության փուլ.
- 3) հարցազրույցի փուլ.
- 4) արդյունքների ամփոփման փուլ.

Հաշվի առնելով կոռուպցիոն ոլորտի առանձնահատկությունները, կարևորվում է Կոմիտեի բոլոր ծառայողների, այդ թվում՝ Կոմիտեի նախագահին ներկայացվող պահանջները: Նախագծով նախատեսվում է, որ Հակակոռուպցիոն ծառայողի պաշտոն կարող է զբաղեցնել այն անձը, որն ունի Հայաստանի Հանրապետությունում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն կրթության որակավորման աստիճան, կամ օտարերկրյա պետությունում ձեռք բերած համապատասխան որակավորման աստիճան, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է օրենքով սահմանված կարգով, անցել է պարտադիր զինվորական ծառայություն, տիրապետում է հայերենին, ունի անգլերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներից առնվազն մեկ՝ ստանդարտացված թեստային համակարգերով կամ Կառավարության սահմանած կարգով ստուգվող լեզվական գիտելիքների համապատասխան մակարդակի իմացություն և այլն: Ընդ որում, կախված զբաղեցրած պաշտոնից՝ Կոմիտեի ծառայողը պետք է բավարարի պաշտոնին ներկայացվող Նախագծով նախատեսված այլ պահանջներին ևս: Օրինակ՝ Կոմիտեի նախագահ կարող է նշանակվել վերոնշյալ պահանջներին բավարարող անձը, որն ունի քննչական մարմնի բարձրագույն կամ գլխավոր խմբերի պաշտոն կամ ունի դատավորի, դատախազի, քննիչի կամ փաստաբանի կամ հակակոռուպցիոն ոլորտում քաղաքականության մշակման կամ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կամ օպերատիվ-հետախուզական գործունեության ոլորտներում գործունեության առնվազն 5 տարվա ստաժ կամ տվյալ պաշտոններում առնվազն 5 տարվա ընդհանուր՝ իրար փոխլրացնող, ստաժ: Համապատասխան ոլորտներում աշխատանքային ստաժի պահանջը բխում է կոռուպցիոն բնույթի առանձնահատկություններից: Օրինակ՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում գործունեության փորձ ունենալու պահանջը պայմանավորված է այն հանգամանքով, որ կոռուպցիոն բնույթի իրավախախտումների զգալի հատված ուղեկցվում է հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների օրինականացմամբ:

Նախագծով Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների գործունեության նկատմամբ սահմանված են առավել խիստ պահանջներ: Կոմիտեի ծառայողի նկատմամբ կիրառվում են «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված սահմանափակումները: Նախագծով հստակորեն նախատեսվել է նշված սահմանափակումների խախտման համար կիրառվող ներգործության միջոցները: Մասնավորապես, Նախագծի համաձայն Կոմիտեի ծառայողի պաշտոնի դադարեցման հիմք է հանդիսանում հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների

նկատմամբ կիրառվող սահմանափակումները խախտելը: Նշված սահմանափակումների և անհամատեղելիության պահանջների խախտումը հանդիսանում է նաև Կոմիտեի նախագահի լիազորությունների դադարեցման հիմք:

Հակակոռուպցիոն կոմիտեում բարեվարքության համակարգի ներդրումը պայմանավորված է ինչպես ՀՀ կառավարության որդեգրած՝ պետական կառավարման համակարգում և պետական մարմիններում բարեվարքության բարձրացմանն ուղղված քաղաքականության իրականացմամբ և ստանձնած միջազգային պարտավորությունների կատարմամբ, այնպես էլ Կոմիտեի գործունեության առանձնահատկություններով: Ինչպես արդեն նշվեց, Կոմիտեում ծառայության անցնելիս Կոմիտեի նախագահը և մյուս ծառայողները անցնում են բարեվարքության ստուգման պարտադիր ընթացակարգ, բացառությամբ Կոմիտեի այն ծառայողների, որոնց անձը ծածկագրված է, և նրանք իրենց լիազորություններն իրականացնում են գաղտնագործունեության լիակատար պահպանմամբ: Բարեվարքության ստուգման գործընթացը ներդրվել է սույն թվականի մարտի 25-ին Ազգային ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կոմիտեն գործում է անկախության և ինքնուրույնության սկզբունքների հիման վրա և իրականացնելու է Կոռուպցիոն հանցագործությունների քննություն, անհրաժեշտություն է առաջանում ներդնել գործուն մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան ապահովել կոմիտեի ծառայողների առաքիճության և բարեվարքության ընթացիկ գնահատում: Այս տեսանկյունից նախագծով Կոմիտեի նախագահի վրա դրվում է պարտականություն՝ սահմանելու Կոմիտեի ծառայողների առաքիճության ստուգման կարգը և պայմանները: Ընդ որում, Կոմիտեի նախագահը իրավասու է ներքին անվտանգության հարցերով ստորաբաժանման միջոցով պարբերաբար իրականացնել Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաքիճության ստուգում, այդ թվում՝ պրովոկացիոն եղանակներով: Հարկ է նշել, որ պրովոկացիոն տերմինի կիրառումը չպետք է շփոթ առաջացնի քրեական օրենսգրքի 350-րդ հոդվածով սահմանված կաշառքի կամ առևտրային կաշառքի պրովոկացիայի հետ, քանի որ Նախագծի 32-րդ հոդվածով առաքիճության նման ստուգման համար սահմանվել է ոչ թե քրեական, այլ կարգապահական ներգործության միջոցի կիրառում, իսկ Նախագծի 34-րդ հոդվածի 9-րդ մասի և Քրեական օրենսգրքի 350-րդ հոդվածով նախատեսված փոփոխություններով բացառվում է հետագայում Կոմիտեի ծառայողի նկատմամբ քրեական պատասխանատվության կիրառումը: Նշված միջոցը կրում է բացառապես Կոմիտեի

ծառայողների բարեվարքության և առաքինության ստուգման դեր և կարող է հանգեցնել կարգապահական պատասխանատվության: Հարկ է նշել, որ պաշտոնատար անձանց բարեվարքության ստուգման նմանատիպ մեխանիզմ կիրառվում է նաև այլ երկրներում, իսկ միջազգային հակակոռուպցիոն կառույցները բարեվարքության ստուգման նմանատիպ մեխանիզմի կիրառումը համարում են արդյունավետ: ՄԱԿ-ի թմրանյութերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակի կողմից մշակված փաստաթղթերում այս մեխանիզմը նկարագրվում է որպես իրավիճակ, երբ պետական ծառայություն իրականացնող անձը ամենօրյա գործունեության ընթացքում կարող է չարաշահել իր լիազորությունները՝ կաշառք պահանջելու կամ առաջարկվող կաշառքը բարեվարքության ստուգումը իրականացնող անձից վերցնելու միջոցով:¹⁰ Նմանատիպ կարգավորումներ գործում են օրինակ ԱՄՆ-ում¹¹, Ուկրաինայում¹² առանց որևէ սահմանադրական խոչընդոտների:

Միաժամանակ, Նախագծում կարգավորվել է Կոմիտեում իրականացվող ծառայության վերաբերյալ հարաբերությունները: Հակակոռուպցիոն կոմիտեում քննչական պաշտոններ զբաղեցնող անձանց (այդ թվում՝ Կոմիտեի նախագահ, տեղակալներ) դեպքում վերջիններս հանդիսանալու են ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ: Ինչ վերաբերում է օպերատիվ-հետախուզական գործառնություններ իրականացնող անձանց, ապա այս դեպքում առանձին ծառայության տեսակ չսահմանելը հանգեցնում էր այնպիսի իրավիճակի, որ հանրային ծառայության համակարգում վերջիններս չէին ներառվում, կամ ներառվում էին անորոշ նշմամբ, որ համարվում են պետական ծառայողներ, սակայն այս դեպքում ևս խնդիրներ էին առաջանում, քանի որ պետական ծառայության տեսակները ՀԾ օրենքով սպառիչ թվարկված են: Հատկանշական է, որ ներկայումս բոլոր օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններում առկա են առանձին ծառայության տեսակներ (ոստիկանության ծառայություն, ազգային անվտանգության մարմիններում ծառայություն, մաքսային ծառայությունը, հարկային ծառայությունը, քրեակատարողական ծառայություն և այլն):

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Նախագծի 3-րդ հոդվածով արտացոլվել են Կոմիտեում իրականացվող ծառայության առանձնահատկությունները: Կոմիտեում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված՝ ոլորտային օրենսդրությունում սահմանվել է, որ պետական ծառայությունն ընդգրկում է նաև

¹⁰ <https://www.unodc.org/documents/treaties/toolkit/f5.pdf> էջ 205

¹¹ https://www.unodc.org/documents/afghanistan/Anti-Corruption/Handbook_practical_anti-corruption.pdf

էջ 91

¹² <https://zakon.rada.gov.ua/laws/show/1698-18/ed20200703#Text>

Հակակոռուպցիոն կոմիտեում իրականացնող ծառայությունը: Նախագծով նման կարգավորման սահմանումը լուծում է Կոմիտեի առանձնահատկություններով պայմանավորված, մի շարք պաշտոնների՝ հանրային ծառայության համակարգում ներգրավվածության ապահովման խնդիրը:

Անդրադառնալով Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների վարձատրությանը՝ հարկ է նշել հետևյալը՝

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում առաջարկվում է սահմանել դրույթ, առ այն, որ ռիսկային առանձնակի բարդություններով, ինչպես նաև հատուկ մասնագիտացմամբ պայմանավորված՝ տարբեր մարմիններում պաշտոններ զբաղեցնող անձինք, կառավարության թույլտվության դեպքում, բացի օրենքով սահմանված պաշտոնային դրույթաչափից և հավելավճարից, կստանան նաև հավելում: Ընդ որում, Հակակոռուպցիոն կոմիտեի դեպքում, որպես գործունեության լրացուցիչ երաշխիք, հավելում ստանալու հնարավորությունը և հավելման չափը սահմանված է օրենքով, իսկ այլ մարմինների եւ պաշտոնների դեպքում կառավարությունն ինքը կորոշի նպատակահարմարությունը:

Նման մոտեցումը հիմնված է ՀՀ սահմանադրության, ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների վրա և հետապնդում է սույն փաստաթղթում ներկայացված իրավաչափ նպատակը: Մասնավորապես,

ՍԴԴ-1443 որոշման շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «Վերոնշյալ իրավանորմների վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր քննչական մարմինների քննիչների կարգավիճակը, ըստ էության, նույնն է. նրանք իրականացնում են Սահմանադրությամբ քննչական մարմիններին վերապահված գործառույթի (քրեական գործով նախաքննության) իրականացմանն ուղղված մասնագիտական գործունեություն: (...) Վկայակոչված իրավանորմների համակարգային վերլուծության արդյունքներով Սահմանադրական դատարանը հանգում է այն հետևությանը, որ Հայաստանի Հանրապետությունում պետական պաշտոններ զբաղեցնող անձանց առնչությամբ իրականացվող պետության սոցիալական քաղաքականությունը, մասնավորապես, վեճի առարկային առնչվող կենսաթոշակի իրավունքի իրացման ոլորտում, ի թիվս այլնի, ունի այն առանձնահատկությունը, որ առանձին կատեգորիայի պաշտոնատար անձանց համար, ելնելով նրանց կարգավիճակի կամ գործառույթների առանձնահատկություններից, օրենսդիրը սահմանել է ավելի բարձր

սոցիալական երաշխիքներ և առավել բարենպաստ պայմաններով կենսաթոշակի իրավունք»:

ՍԴՈ-881 որոշման շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ «Սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է այն տարբերակված մոտեցումը, որը զուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից»:

Այս մոտեցումը բխում է նաև Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի կողմից 2017 թվականի հոկտեմբերի 9-ին տրված թիվ 896/2017 կարծիքում արտահայտած դիրքորոշումներից: Վերոնշյալ դիրքորոշումը թեև արտահայտվել է հակակոռուպցիոն մասնագիտացման դատավորների գործունեության շրջանակներում, սակայն հարկ է նշել, որ այն կիրառելի է հակակոռուպցիոն իրավապահ մարմիններում իրականացվող ծառայության նկատմամբ ևս, քանի որ անդրադարձ է կատարվում հենց մասնագիտացման ռիսկերով պայմանավորված առկա տարբերություններին: Մասնավորապես, Վենետիկի հանձնաժողովը վերոնշյալ թիվ 896/2017 կարծիքով նշել է. «Թիվ 6011 օրենքի նախագծի համաձայն հակակոռուպցիոն դատավորների վարձատրության հատուկ համակարգը պետք է վերանայել: Մի կողմից, պարզ է, որ այդ դատավորները պետք է ունենան իրավունք ավելի բարձր աշխատավարձի, քան առաջին աստիճանի դատարանների ընդհանուր մասնագիտացման դատավորները, և պետք է նաև հաշվի առնել, որ նրանք աշխատում են կարևոր կոռուպցիոն ռեպերի վրա և կարող են հայտնվել արտաքին զգալի ճնշման տակ, ԵԴԽՆ-ն ընդունում է հատուկ վարձատրության հնարավորությունը, «եթե հատուկ հիմքեր կարելի է առանձնացնել, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ կա՛մ մասնագետ դատավորի մասնագիտության առանձնահատկությունները, կա՛մ նրա պարտականությունների բեռը (ներառյալ անձնական բեռը, որը կարող է լինել՝ ծագած մասնագետի գործառույթի յուրահատկությամբ) պահանջում են այդպիսի վարձատրություն»^[1]:

Հիշատակված իրավական դիրքորոշումներից պարզ է դառնում, որ սոցիալական արդարությունը, որպես Հայաստանի Հանրապետության հիմնարար նպատակ-արժեքներից մեկը, պահանջում է, ի թիվս այլ ռեպերի, պետական այս կամ այն ծառայության աշխատակիցների համար սահմանել աշխատանքային գործունեության համար արդար վարձատրություն՝ զուրկ խտրականության

տարրերից: Խտրականության արգելքը, սակայն, ունի իր ողջամիտ սահմանները, այն է՝ էական նշանակություն ունեցող աշխատանքային պայմանները, աշխատողին ներկայացվող յուրահատուկ պահանջները, այլ պայմաններ, որոնք աշխատողի համար էականորեն առավել տարբերվող պայմաններ են ստեղծում նույնաբնույթ այլ աշխատանք կատարող անձանցից, բացի այդ՝ անձից պահանջում են աշխատանքը կատարել առավել դժվարին, առավել բարձր ռիսկայինության պայմաններում: Այդ դեպքերում սոցիալական պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովել համապատասխան աշխատակիցների առավել բարձր վարձատրություն, որպեսզի ապահովվի սոցիալական արդարությունը աշխատանքային հարաբերություններում:

Հակակոռուպցիոն կոմիտեի դեպքը քննարկելիս պարզ է դառնում, որ 1. Կոմիտեն իրականացնում է կոռուպցիոն հանցագործությունների քննություն, որն ինքնըստինքյան ունի բարձր ռիսկայնություն, քանի որ քննարկելու է հայտարարատու անձանց, այդ թվում՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից ենթադրաբար կատարված հանցավոր արարքներ, աշխատանքը պահանջում է էականորեն առավել բարձր մակարդակի պրոֆեսիոնալիզմ, հնարավոր ճնշման պայմաններում ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան գործելու կարողություն, ոլորտային օրենսդրության առավել մանրամասն իմացություն: 2. Կոմիտեի ծառայողների վարձատրությունը ուղղակիորեն հանդիսանում է վերջինիս անկախության և անկաշկանդ գործելու երաշխիքներից մեկը: Որպեսիրավապահ մարմին, որ մասնագիտացած է լինելու հենց կոռուպցիոն հանցագործությունների փաստի հիման վրա հարուցված քրեական գործերը քննելու լիզորությամբ, կարևորագույն նախապայման է, որպեսզի համապատասխան աշխատակիցները ապահովված լինեն բոլոր բարենպաստ նախապայմաններով, ի թիվս որոնց, առաջնային դիրք են գրավում անկախությունը և անկաշկանդ գործելու հնարավորությունը: 3. Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչ աշխատելու համար առկա են մի շարք էական սահմանափակումներ, որակավորման առավել բարձր մակարդակ, այդ թվում՝ լեզուների իմացություն, բարեվարքության ստուգում, մրցութային կարգով աշխատանքի անցնելու պահանջ, բացի այդ՝ բարեվարքության պարբերաբար ստուգումներ Հակակոռուպցիոն կոմիտեում աշխատանքային գործունեություն ծավալելու ամբողջ ընթացքում:

Հիշյալ բոլոր պայմանները համակցության մեջ դիտարկելիս պարզ է դառնում, որ Հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոն զբաղեցնելու և գործունեություն ծավալելու համար ներկայացվում են լրացուցիչ պահանջներ, աշխատանքային գործունեությունը ծավալվելու է ավելի լարված պայմաններում, իսկ վարքագծի անբասիրությունը ենթարկվելու է պարբերաբար ու խիստ ստուգման, ինչը

հանգեցնում է անհրաժեշտության, որպեսզի Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները ստանան առավել բարձր վարձատրություն:

Հարկ է նաև նշել, որ հաշվի առնելով Կոմիտեի գործունեության թափանցիկության և հանրային հաշվետվողականության սկզբունքները, ինչպես նաև միջազգային կառույցների կողմից հակակոռուպցիոն իրավապահ մարմնի վերաբերյալ ներկայացված կարծիքները, Կոմիտեի աշխատակիցների վարձատրության հարաբերությունները, ի տարբերություն այլ իրավապահ մարմինների, ամբողջապես կարգավորվում են օրենքով:

Կոմիտեի գործունեությունը պետք է լինի հնարավորինս թափանցիկ և հիմնված լինի հաշվետվողականության վրա: Այդ նպատակով Նախագծով առաջակվող կարգավորումների համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեն յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո՝ մեկամսյա ժամկետում, իր պաշտոնական կայքէջում հրապարակում է գործունեության մասին ամփոփ տեղեկատվություն: Տեղեկատվության կառուցվածքը, դրանում ներառվող հարցերի շրջանակը սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը: Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվությունը պաշտոնական կայքէջում հրապարակվում է յուրաքանչյուր տարի՝ մինչև հունվարի 31-ը:

Նախագծով կարգավորվել է նաև քննչական ենթակայության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրական կարգավորումները: Նշվածը պայմանավորված է օրենսդրական որոշակի բացերի վերացման անհրաժեշտությամբ:

Ինչ վերաբերում է հաստիքների սահմանմանը և գործերի բաշխմանը՝ հարկ է նշել, որ, 2019 թվականի հոկտեմբերի 3-ին հաստատված Հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանվել էր, որ Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծմամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանալու կրճատել այլ մարմինների հաստիքները և դրանք փոխանցել Հակակոռուպցիոն կոմիտեին: Այս առումով, ռազմավարությամբ նախատեսվում էր կրճատել ՀՀ ոստիկանության օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման համար նախատեսված հաստիքները, Հատուկ քննչական ծառայության կոռուպցիոն հանցագործությունների քննությամբ զբաղվող քննիչների հաստիքները, ինչպես նաև Ազգային անվտանգության ծառայության օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման համար նախատեսված և կոռուպցիոն հանցագործությունների քննությամբ զբաղվող քննիչների հաստիքները:

Միաժամանակ, հարկ է նշել, որ Կոմիտեի ստեղծմամբ լուծարվում է Հատուկ քննչական ծառայությունը, որի կողմից քննվող կոռուպցիոն գործերը փոխանցվելու

են Կոմիտեին: Մյուս իրավապահ մարմինների կողմից արդեն իսկ հարուցված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը կարող են փոխանցվել Կոմիտեի նախագահի համաձայնության պարագայում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծմանը հաջորդող որոշ ժամանակահատվածի ընթացքում վերոնշյալ մարմինները շարունակելու են քննել իրենց վարույթներում առկա գործերը, որպեսզի հնարավոր լինի անցումային շրջանում սահուն կերպով ապահովել Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից գործերի քննության արդյունավետությունը՝ հաստիքների կրճատումը և գործերի փոխանցումը հակակոռուպցիոն կոմիտեի վարույթ պետք է իրականացվի հատվածային մոտեցմամբ:

Այս առումով, իրավապահ մարմինների կողմից կոռուպցիոն հանցագործությունների քննության իրական պատկեր ստանալու նպատակով Արդարադատության նախարարությունը ևս մեկ անգամ հարցում է կատարել քննչական մարմիններին և Գլխավոր դատախազությանը: Գլխավոր դատախազությունից ստացված պատասխանի համաձայն՝ 2019 թվականի հուլիսի մեկից մինչև 2020 թվականի հուլիսի մեկն ընկած ժամանակահատվածում հսկողություն է իրականացվել ՀՀ քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ 2228 քրեական գործի մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ:

Հատուկ քննչական ծառայությունից ստացված պատասխանի համաձայն՝ հետաքրքրություն ներկայացնող ժամանակահատվածում քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քննվել է 362 քրեական գործ: Նախաքննությունն հիմնականում իրականացրել են կոռուպցիոն, կազմակերպված և պաշտոնական հանցագործությունների քննության վարչության 10 քննիչները, սակայն անհրաժեշտության դեպքում նախաքննությունն իրականացրել են նաև այլ վարչությունների և ծառայության պետին առընթեր քննիչները: Ազգային անվտանգության ծառայությունից ստացված պատասխանի համաձայն՝ 2019 թվականի հուլիսի մեկից մինչև 2020 թվականի հուլիսի մեկն ընկած ժամանակահատվածում քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քննվել է 184 քրեական գործ: Նախաքննությունն իրականացվել է 17 քննիչների կողմից: Պետական եկամուտների կոմիտեի նշմամբ նույն ժամանակահատվածում քրեական օրենսգրքի 6-րդ հավելվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ քննվել է 28 քրեական գործ: Նախաքննությունն իրականացվել է 13 քննիչների կողմից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննչական կոմիտեում վիճակագրությունը վարվում

էր մինչ այս պահը բացառապէս նախկին կոռուպցիոն հանցագործությունների ցանկի համաձայն, որն անհամեմատ առավել լայն է, քան գործող ցանկը, նշվել է, որ սահմանված ժամանակահատվածում քննվել է 1313 քրեական գործ, որից 555-ը փոխանցվել է 2019թ.-ի առաջին կիսամյակից, իսկ 825-ը փոխանցվել են 2020 թվականի երկրորդ կիսամյակ: Քննչական կոմիտեն նշել է, որ քննիչների քանակի վերաբերյալ ստույգ տեղեկատվություն չի կարող տրամադրել, քանի որ նախաքննությունն իրականացրել են տարբեր վարչությունների քննիչներ:

Վերոգրյալի միտումով՝ նախնական հաշվարկներով Կոմիտեում ներգրավված են լինելու մոտ 30 քննիչներ և 60 օպերատիվ աշխատակիցներ: Հարկ է նշել, որ նշված է պահանջվող աշխատակիցների նախնական քանակը, որը, հաշվի առնելով կոռուպցիոն հանցագործություններով հարուցվող քրեական գործերի աճը, հետագայում կարող է վերանայվել: Կոմիտեի առաջին կազմի համապատասխան քանակով քննիչների նշանակումից հետո, 10-օրյա ժամկետում՝ Հատուկ քննչական ծառայությունում գտնվող կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով հարուցված քրեական գործերը (նյութերը), ինչպես նաև կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով քրեական գործի հարուցման փուլում գտնվող գործերը փոխանցվում են Հակակոռուպցիոն կոմիտեին: Բացի այդ, մինչև Կոմիտեի ստեղծումը ընկած ժամանակահատվածում այլ քննչական մարմիններում գտնվող կոռուպցիոն ենթադրյալ հանցագործություններով քրեական գործերը (նյութերը) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը կարող է այդ մարմինների քննիչների վարույթից վերցնել և Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի համաձայնությամբ հանձնել Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթին:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից:

Ակնկալվող արդյունքը.

Սույն Նախագծի ընդունմամբ ակնկալվում է Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիոն իրավախախտումների բացահայտումը, կոռուպցիոն հանցագործությունների քննությունը դարձնել ավելի արդյունավետ՝ այն մասնագիտացված, անկախության երաշխիքներով օժտված հակակոռուպցիոն մարմնի միջոցով իրականացնելու եղանակով:

[ԼՐԱՄՇԱԿԿԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ](#)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԱՍԻՆ**

**ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

6)2. Սույն օրենքը կարգավորում է Հակակոռուպցիոն կոմիտեի՝ ~~որպես քննչական մարմնի~~, լիազորությունները, համակարգը և կառուցվածքը, կազմավորման, գործունեության, ծառայության անցնելու և պաշտոն զբաղեցնելու կարգը և պայմանները, պաշտոնների ու դասային աստիճանների դասակարգումը, ծառայողների իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը, իրավական ու սոցիալական երաշխիքները և պաշտոնավարման հետ կապված մյուս հարաբերությունները:

Հոդված 2. Հակակոռուպցիոն կոմիտեի մասին օրենսդրությունը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի ~~մասին օրենսդրությունը բաղկացած է հետևյալ կապված հարաբերությունները կարգավորվում են~~ սույն օրենքից օրենքով, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքից օրենսգրքի, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ~~ՀՀ օրենքից, այլ օրենքներից ու իրավական ակտերից, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերից:~~

7)2. Հակակոռուպցիոն կոմիտեի վրա տարածվում է նաև «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության ~~օրենքն այնքանով, որքանով դրա նորմերն իրենց էությանը կիրառելի են ծառայության այդ տեսակի նկատմամբ և չեն հակասում սույն օրենքի էությանը:~~ վերաբերելի նորմերով, այլ իրավական ակտերով:

Հոդված 3. Սույն օրենքի հիմնական հասկացությունները

5)4. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

7) Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայություն՝ պետական ծառայության տեսակ, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով.

~~2.8)~~ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայող՝ Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք—~~է~~, օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման ~~աշխատողները~~աշխատողներ.

~~3.9)~~ Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը, նրա տեղակալները, ~~Հակակոռուպցիոն~~հակակոռուպցիոն կոմիտեի վարչությունների պետերը, նրանց տեղակալները, բացառությամբ՝ Հակակոռուպցիոն կոմիտեի՝ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ~~ստորաբաժանման~~վարչության ղեկավարի (հետաքննության մարմնի պետի) և նրա տեղակալի, Հակակոռուպցիոն կոմիտեի բաժինների պետերը, նրանց տեղակալները, բացառությամբ՝ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող բաժինների ղեկավարների և նրանց տեղակալների. Հակակոռուպցիոն կոմիտեի- հատկապես կարևոր գործերով ավագ քննիչները, հատկապես կարևոր գործերով քննիչները, ավագ քննիչները, քննիչները.

~~4.10)~~ Հակակոռուպցիոն կոմիտեում քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձ՝ —Հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղարը, նրա տեղակալը և ~~հակակոռուպցիոն~~Հակակոռուպցիոն կոմիտեի հիմնական գործառույթների իրականացմանը աջակցող ստորաբաժանումների ծառայողները.

~~1) Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման աշխատակիցներ՝ պետական ծառայողներ, այդ թվում՝ վարչությունների պետերը, նրանց տեղակալները, բաժինների պետերը, ավագ հետաքննիչներ, հետաքննիչներ, որոնց վրա տարածվում են Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերաբերյալ սույն օրենքով նախատեսված կարգավորումները.~~

~~5.11)~~ կոռուպցիոն հանցագործություններ՝ ~~ՀՀ~~Հայաստանի Հանրապետության քրեական ~~օրենսգրքի 1-ին հավելվածով~~օրենսգրքով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների ցանկի մեջ մտնող հանցագործություններ.

~~6.12)~~ Հակակոռուպցիոն կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանում՝ կոմիտեի կազմում գործող վարչություն ~~է~~կամ բաժին:

**ՀԱՎԱԿՈՐՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

Հոդված 4. Հակակոռուպցիոն կոմիտեի կարգավիճակը և լիազորությունները

~~11)2.~~ 2. Հակակոռուպցիոն կոմիտեն քննչական մարմին է, որը կազմակերպում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով իր ենթակայությանը —վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթը:

2. Հակակոռուպցիոն կոմիտեն ~~քրեական վարույթ նախաձեռնելու հարցի~~ ~~խոնարհության~~ ~~նպատակով~~ իր լիազորությունների շրջանակներում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքով սահմանված կարգով իրականացնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն:

3. Հակակոռուպցիոն կոմիտեն իրականացնում է նաև սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 5. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության սկզբունքները

~~4)3.~~ 3. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությունը հիմնվում է անկախության, հրապարակայնության, ֆինանսական ինքնուրույնության և քաղաքական չեզոքության սկզբունքների վրա:

~~5)4.~~ 4. Հակակոռուպցիոն կոմիտեն օպերատիվ-հետախուզական գործունեությունն իրականացնում է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված օպերատիվ-հետախուզական գործունեության սկզբունքների պահպանմամբ:

Հոդված 6. Հակակոռուպցիոն կոմիտեի անկախությունը

~~1-6)2.~~ 2. Հակակոռուպցիոն կոմիտեն իր լիազորություններն իրականացնելիս, ինչպես նաև իր կառուցվածքին, աշխատանքների կազմակերպման կարգին վերաբերող որոշումներն ընդունելիս անկախ է և ենթարկվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին:

Հոդված 7. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության հրապարակայնությունը և հաշվետվողականությունը

3-4. Հակակոռուպցիոն կոմիտեն հանրությանը տեղեկացնում է իր գործունեության մասին՝ ապահովելով նախաքննության գաղտնիությունը, ինչպես նաև պետական և օրենքով պահպանվող այլ գաղտնիքների պաշտպանությունը:

4-5. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը յուրաքանչյուր տարի՝ մինչև հունվարի 31-ը, Կառավարություն և Ազգային ժողով է ներկայացնում նախորդ տարվա գործունեության մասին գրավոր հաղորդում:

5-6. Հակակոռուպցիոն կոմիտեն յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո՝ մեկամսյա ժամկետում, իր պաշտոնական կայքէջում հրապարակում է գործունեության մասին ամփոփ տեղեկատվություն: Տեղեկատվության կառուցվածքը, դրանում ներառվող հարցերի շրջանակը սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը: Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվությունը պաշտոնական կայքէջում հրապարակվում է յուրաքանչյուր տարի՝ մինչև հունվարի 31-ը:

Հոդված 8. Ֆինանսական ինքնուրույնությունը

2-6. Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին:

3-7. Հակակոռուպցիոն կոմիտեն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին ~~Հայաստանի Հանրապետության վարչապետի~~ վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում յուրաքանչյուր տարի կազմում և Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում Հակակոռուպցիոն կոմիտեի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը (պետական բյուջեով Հակակոռուպցիոն կոմիտեի գծով նախատեսվելիք ծախսերի նախահաշվի նախագիծը)՝ առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում ներառելու համար:

4-8. Հակակոռուպցիոն կոմիտեի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը Կառավարության կողմից ընդունվելու դեպքում ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում, իսկ առարկության դեպքում պետական բյուջեի նախագծի հետ միասին ներկայացվում է Ազգային ժողով: Կառավարությունն Ազգային ժողով և Հակակոռուպցիոն կոմիտե է ներկայացնում բյուջետային ֆինանսավորման հայտի վերաբերյալ առարկության հիմնավորումը:

5-9. Հակակոռուպցիոն կոմիտեի բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է ~~հակակոռուպցիոն~~ Հակակոռուպցիոն կոմիտեի պահուստային ֆոնդ, որը

ներկայացվում է բյուջեի առանձին տողով: Պահուստային ֆոնդի մեծությունը հավասար է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով ~~հակակոռուպցիոն~~ Հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձի ֆոնդի երկու տոկոսին:

6.10. Պահուստային ֆոնդից հատկացումները կատարվում են ~~հակակոռուպցիոն~~ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի որոշմամբ:

Հոդված 9. Քաղաքական չեզոքությունը

2.3. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը ցանկացած հանգամանքներում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն:

3.4. Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, հանրաքվեներին ~~հակակոռուպցիոն~~ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը կարող է մասնակցել միայն որպես ընտրող (քվեարկող):

~~1. Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ մասնագիտական քննարկումները կամ եզրակացությունները, Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության վերաբերյալ քննարկումների ժամանակ արտահայտած կարծիքները և հայտարարությունները, այդ թվում՝ հրապարակային, ապաքաղաքականացվածության սկզբունքի խախտում չեն համարվում:~~

ԳԼՈՒԽ 3

ՀԱԿԱԿՈՐՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հոդված 10. Հակակոռուպցիոն կոմիտեի համակարգը

7. 4. Հակակոռուպցիոն կոմիտեի համակարգը ներառում է՝ հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները (այդ թվում՝ տարածքային ստորաբաժանումներ և ներքին անվտանգության հարցերով ստորաբաժանում) և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները:

8 . 2. Հակակոռուպցիոն կոմիտեի ստորաբաժանումներն են վարչությունները և բաժինները: Հակակոռուպցիոն կոմիտեի վարչությունը կարող է ունենալ նաև բաժիններ:

9 . 3. Հակակոռուպցիոն կոմիտեի լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը և քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունը ապահովում է Հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղարը:

1 0 . 4. Հակակոռուպցիոն կոմիտեի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներում աշխատողները քաղաքացիական ծառայողներ են, որոնց վրա տարածվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքը:

1 1 . 5. Հակակոռուպցիոն կոմիտեում պայմանագրային կարգով սպասարկման աշխատանքներ իրականացնող անձինք ծառայողներ չեն և աշխատանքի են ընդունվում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

1 2 . Հակակոռուպցիոն կոմիտեի կառուցվածքը, պաշտոնների, այդ թվում՝ հայեցողական պաշտոնների, տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց, անվանացանկը և հաստիքացուցակը հաստատում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:

Հոդված 11. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը

7. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը ղեկավարում և վերահսկում է Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությունը և պատասխանատու է Հակակոռուպցիոն կոմիտեի բնականոն գործունեության ապահովման համար:

8. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը՝

6) 13) սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կողմից կոռուպցիոն գործերի բացահայտման և քննության պատշաճ կազմակերպման ուղեցույցները և ապահովում դրանց իրականացման նկատմամբ վերահսկողությունը.

7) 14) կատարում է աշխատանքի բաժանում իր տեղակալների միջև.

8) 15) իր իրավասության սահմաններում ընդունում է ենթաօրենսդրական, ներքին և անհատական իրավական ակտեր և, տալիս է հանձնարարականներ.

~~9)~~16) ներկայացնում է Հակակոռուպցիոն կոմիտեն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների (այդ թվում՝ միջազգային) հետ հարաբերություններում:

~~10)~~17) հաստատում է Հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությունը, կառուցվածքը, պաշտոնների անվանացանկը և հաստիքացուցակը:

~~11)~~18) նշանակում է ծառայողական քննություններ կամ դադարեցնում դրանք, նշանակում և փոփոխում է ծառայողական քննություն կատարողին:

~~12)~~19) խրախուսում և կարգապահական պատասխանատվության է ենթարկում ~~հակակոռուպցիոն~~ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներին, պարզևատրում է Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությանն՝ օժանդակող անձանց:

~~13)~~20) Հակակոռուպցիոն կոմիտեի խնդիրների իրականացման, ~~հակակոռուպցիոն~~ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով ստեղծում է խորհրդակցական մարմիններ՝ սահմանելով դրանց գործունեության կարգը:

~~14)~~21) քայլեր է ձեռնարկում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի և նրա ընտանիքի անդամների անվտանգության ապահովման ուղղությամբ՝ այդ թվում՝ «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

~~15)~~22) սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաքինության ստուգման կարգը և պայմանները:

~~16)~~23) իրավասու է ներքին անվտանգության ստորաբաժանման միջոցով ~~պարբերաբար~~ իրականացնել Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաքինության ստուգում, այդ թվում՝ պրովոկացիոն եղանակներով: Առաքինության ստուգման գործընթացը չպետք է խոչընդոտի Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների բնականոն գործունեությանը:

~~17)~~24) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

9. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում՝ նրա հանձնարարությամբ նրան փոխարինում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալներից մեկը, իսկ հանձնարարության ~~—~~բացակայության դեպքում՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ առավել երկար մասնագիտական ստաժ ունեցող տեղակալը:

10. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին սույն օրենքով սահմանված կարգով նշանակում է ~~վարչապետը~~ կառավարությունը՝ վեց տարի ժամկետով ~~և սույն օրենքով սահմանված կարգով~~:

11. Սույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնում:

12. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնավարման ժամկետը չի կարող գերազանցել սույն օրենքով սահմանված պաշտոնավարման սահմանային տարիքը՝ անկախ վերանշանակման հանգամանքից:

Հոդված 12. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալ տեղակալը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահն ունի երեք տեղակալ:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալը՝

12)2) համակարգում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից իրեն հանձնարարված ոլորտի աշխատանքները.

2) իր իրավասության սահմաններում ընդունում է ներքին և անհատական իրավական ակտեր, տալիս հանձնարարականներ.

3) միջնորդություններ է ներկայացնում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներին խրախուսելու կամ նրանց կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.

4) իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 13. Ծառայողական և քրեադատավարական վերադասությունը

1. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը վերադաս է Հակակոռուպցիոն կոմիտեի բոլոր ծառայողների համար:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալը վերադաս է Հակակոռուպցիոն կոմիտեի իր համակարգման ներքո գտնվող ~~Հակակոռուպցիոն կոմիտեի~~ բոլոր ծառայողների համար:

3. Հակակոռուպցիոն կոմիտեի ստորաբաժանման պետը վերադաս է տվյալ ստորաբաժանման բոլոր ծառայողների համար:

4. Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողական վերադասության մյուս հարաբերությունները կարգավորվում են Հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությամբ:

5. Հակակոռուպցիոն կոմիտեում քրեադատավարական վերադասության հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով:

ԳԼՈՒԽ 4

ՀԱԿԱԿՈՐՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ, ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՈՒ ԱԶԱՏՄԱՆ, ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հոդված 14. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների պաշտոնների համակարգը

~~13.2.~~ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների ~~—~~պաշտոնները դասակարգվում են հետևյալ խմբերի.

~~7.5)~~ բարձրագույն պաշտոններ.

~~8.6)~~ գլխավոր պաշտոններ.

~~9.7)~~ առաջատար պաշտոններ:

8) կրտսեր պաշտոններ:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների բարձրագույն, գլխավոր և առաջատար պաշտոնների ~~յուրաքանչյուր խումբ խմբերը~~ դասակարգվում է են 1-ին, 2-րդ և 3-րդ ենթախմբերի: իսկ կրտսեր պաշտոնները՝ 1-ին և 2-րդ ենթախմբերի:

